ԱՐՑԿ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՂԴԵՑՄՆ, ԲԱՆԱՍՏԵՂԾԱՆ, ՊԱՏՊԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԵՐԶԱՆ ՄԻԱՄԵԱՑ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1875

ՑՈՒՑԱԿ ԳՐՈՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԲՈՒԲՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ԵՒ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԻՆ

	Ղրս	Փող.
Աչեկս , Հայկերենէ վերածեց Ի Տաճկերէն Յ. Քիւրքճեանոգի . տպեալ 1872.	4	
Աղօթագիրք Արշտան տէղւոյ , աշխարհիկ լեզուաւ .	2	
Յիշուածք Ի Սիոն , ոգեւոյ Մ. Թաթուլ. 1869.	1	20
Առաքինութեան ճաշակ , կամ Մեծոյն մանկանց , թարգմանեց Տ. Հ. Թ. Ս.	7	
Աւետարան առանձին. Ս. Եկեղեցւոյ մէջ կարդացուելիք աւետարաններն են.	30	
Աւետարան փոքր , Տպեալ 1867.	6	
— Նոյնը Կոստանդնուպ. Տպեալ 1867.	12	
— Նոյնը ճաշու. Տպեալ. 1868.	30	
Բանախօսութիւն , աշակերտուհեաց մէջ. Ռ. Տիլ 1874.	1	
Բացատրութիւն Հրաժարման՝ եւ ղջման եւ սաւանօտման եղջոց ընծրհալ. (*)	6	
Գագիկ վերջին արքայ Հայոց Բագրատունի , ողբերգութիւն. Տպ. 1872.	5	
Գործք Առաքելոց , Տպեալ 1867.	6	
Գործք Ոսկեղինիկ Սանուէլ Որբոյ հրեի. Տպեալ 1867.	3	
Գոլոսանք. Տպեալ 1867.	3	
Եղիշէ , պատմութիւն Վարդանանց պատերազմին ընտիր գործ նախնեաց.	7	
Երեսուն կրից. Տպեալ 1851.	7	
Երկու խօսք , եկեղեցւոյ պաշտօնէից ուղղուած. Տպեալ 1873.	3	
Եփրեմ խուրի , աղօթագիրք , գործ նախնեաց , Դ. տպագ. 1870.	7	
Զանազանութիւն հինդ զարուց. Ռ. տիպ. 1862.	40	
Ընդհանրական թուղթք Ներսիսի Շնորհալւոյ. Տպեալ. 1871.	18	
Թանգարան խրատու. Գ. տիպ 1870.	18	
Թոփալոլի տէտրակ տարեկան , Տպեալ 1839. (*)	3	
— Նոյնը չարաթական. Տպեալ 1838 (*)	2	20
— Նոյնը՝ Ս. Յակոբայ տանարին մէջ կատարուած թափօրներու համար	4	
Թուաբանութիւն համառօտ , Ս. Պ. Փափազեանցի , Դ տիպ. 1869.	3	
Ժամագիրք խոշորագիր. Տպեալ 1866.	20	
Ժամագիրք առանձ. Տպեալ 1870.	50	
Իննդիր Ս. Տեղեաց եւ նորա պաշտօնական քննութիւնը , Տպեալ 1871. (**)	6	
Խորհրդածութիւն Ս. պատարագի , գործ նախնեաց. Տպեալ 1842.	10	
Խորհրդատետր Ս. պատարագի , Տպեալ 1873.	10	
Կարգադրութիւն առաջնութեան , Տպեալ 1871.	5	
Կենսագրութիւն Բասքալայ , Տպեալ 1869.	2	
Կտակադիր հոգելոյն բանից. գրեց Ամրոսիոս Խոռենց. Տպեալ 1853.	6	
Կրթարան Աւետարանական բանից , Դաս Ա. Սիոնի պետաս .	1	20
» » » Դաս Բ. Առնարագի.	1	20
» » » Դաս Գ. Որդիք Աստուծոյ.	1	20
Հաճախաստուածութիւն երկուասան առաքելոց , հանդերձ յաւելուածովք.	4	
Հառաջաւութիւն Քրիստոնէական ուսման. Տպեալ 1873.	4	
Հայելի վիպաց. Տպեալ 1852. (**)	6	

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ամէն տպագրեալք (*) նոյն գրքին հաշտագիրք ելլուած են յոյժին .
Իսկ երկուքը (**) Բոլորովին տպաւոյժ ելլուած .



ՄԵՂՈՆ

ՏԱՐԻ 5·

ԱՄԱՍԱԳԻՐ

ՄԱՅԻՍ 31
1875·

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Ի ՋՈՒԻՑԵՐԻԱ (*)

ՋՈՒԻՑԵՐԻՈՑ ժողովրդային կրթութեան վերայ ընդհանրապէս խօսելոյն , բայց աւելի տեղեկութիւն տալու համար՝ հարկ է նահանգները վերայ եւս խօսիլ . վասն զի , ինչպէս կանխաւ ասացինք , կրթութեան պատասխանատուութիւնն այնչափ ընդարձակ է Զուիցերիոյ մէջ , որ այս մասին իրարմէ կը տարբերին նահանգները թէ դաստիարակութեան յատուկ տահմանագրութեամբ և թէ ինքնուրոյն նպատակաձգութեամբ : Եւ որովհետեւ իւրաքանչիւր նահանգի վերայ մանրամասն տեղեկութիւնը շատ երկար կը լինի , ուստի կ՚ընտրենք երկու նահանգներ միայն՝ Ցիւրիխ և Նեվշատէլ , առաջինն իբրեւ տիպար այն նահանգներուն , ուր գերմանական լեզուն կը տիրէ , իսկ երկրորդն իբրեւ տիպար այն նահանգներուն , ուր կը տիրէ Ֆրանսերէն լեզուն :

ՑԻՒՐԻԽ Պրուսիոյ մէջ դպրոցական կազմակերպութիւնն միատեսակ է , ուր վերին իշխանութիւնն ամեն բան կը կանոնաւորէ և կը տեսչութեան . ընդհանուր Ցիւրիխի մէջ դպրոցական կազմակերպութիւնն բոլորովին հատուկ ուսումնական է , ուր քաղաքացիք

(*) Շարունակութիւն , տես Թիւ 4։

ինքեանք կը խառնուին կրթութեան գործոյն և ինքնին կը տնօրինեն։

Ցիւրիխ 266,265 բնակիչ ունի, յորոց 255,000 քաղաքական են։ Տէրութիւնն կը հսկէ ամեն կարգի և տասիճանի դպրոցներուն հատարակաց կրթութեան վերին Խորհրդոյ միջոցաւ, որ վեց անդամներէ բաղկացած է, չորսն Մեծ Խորհրդէն ընտրուած, իսկ երկուքն դպրոցական Սինոդէն։ Բայց յայսմանէ կան մասնաժողովներ ամեն դպրոցական շրջանակներու մէջ, որոնք կը հսկեն դպրոցներուն վերայ և տարին մի անգամ յատուկ պատգամաւորի ձեռամբ տեղեկագիր կը մատուցանեն Կրթութեան Վերին Խորհրդոյն, յորում՝ ազատօրէն վճռաբանութեան կ'առնուին ուսման խնդիրներն։ Շրջանակներու մասնաժողովներու անդամներէն կ'ընտրեն 3 հատն ուսուցիչներն, 9 կամ 10 հատն քաղաքացիներն։ Ամեն շրջանակի ուսուցիչներն ունին յատուկ ժողով, և տարին չորս անգամ կը գումարին առանց բացառութեան որ և իցէ անգամոյ։ Կը վճռեն ուսման խնդիրներուն վերայ եւ տեղեկագիր կը տան շրջանակի մասնաժողովին, որ դպրոցական արկղն եւ գործերն կը տնտեսէ։ Ամեն շրջանակի ուսուցչայց ժողովներու նախագահներն տարին մի անգամ կը գումարին, իրենց բաղձանքներն եւ կարծիքներն Վերին Խորհրդոյն հաղորդելու համար։ Ամեն ուսուցչական ժողով ունի իւր յատուկ գրադարանն։

Դպրոցական Սինոդի անգամ կը համարուին ուսուցչաց ժողովներու բոլոր անդամներն, այսինքն բովանդակ ուսուցանող մասին։ Սինոդն տարին մի անգամ կը գումարի և իւր դիւանն կը կազմէ երկու տարուան համար։ Շատ սիրուն և փառաւոր են Սինոդական գումարումներն։ Նիստն հրապարակական է, ուր կը վիճաբանի դաստիարակութեան խնդիրներուն վերայ, կը կարդացուին տեղեկագիրներ և յիշատակագիրներ, աղօթքներ եւ երգիր կ'երգուին, ճաշկոյգքներ կը լինին, որով սեր եւ մտերմութիւն կը տարածուի բոլոր ուսուցչաց մէջ, և այսպէս կը զարգանայ, կը զօրանայ ուսուցչական մասնին։

Այս եղանակաւ դաստիարակին կը պաշտպանուի, կը խնամուի և կը յառաջանայ։ Աղատութեան և հատատարութեան զգացումներն կը բացուին ու կը ծաղկին, Թեմոնութիւն, նախանձ, ատելութիւն, վհատութիւն և թուլութիւն կը հալածին։ Սոյն գումարումներն թէ դաստիարակական կրթութիւններ և մարզեր են, և թէ ուժեր։ Գումարումներէն ղինի վինախոպոսութիւններ եւ վինաւորական վարժութիւններ կը կատարեն։ Սոյն ճշմարիտ հատատարապետական դրութիւնն իրաւունք կը տայ դաստիարակին թէ իւր կարծիքն ազատօրէն յայտնել, թէ քննել տալ, և թէ ունի իւր պարբերական գործն, որուն մէջ կարող է հրատարակել իւր գաղափարներն ու իրձերն և հատատարութեան ծանօթացնել։

Սինոդական գումարման տեղն ամեն տարի կը փոխուի և Տէրութիւնն կը մանակի գրաւոր աշխատութեանց տպագրական ծախսուց։

Վեց տարեկան հատակէն թէ տղայք եւ թէ աղջկունք պարտաւոր են դպրոց յաճախել, ապա թէ ոչ ծնողք տուգանքի կ'ենթարկին։

Դպրոցներն երկու կարգ կը բաժնուին — Նախնական, ուր աշակերտողք կը յաճախեն երեք տարի, և Իրական կամ Իսկան (Realschule) որք նոյնպէս երեք տարուան ընթացք ունին։ Մանկունք պարտաւոր են երկու տարի ևս

յառաջանալ Կրկնաբերան դպրոցին (Ergänzungsschule) շաբաթին չորս ժամ և երաժշտութեան դպրոցին շաբաթին մի ժամ։ Աշակերտաց հարիւր թիւն եթէ անցնի, անպատճառ մի դասարան և մի դասատու եւս կը յատկացուի։ Դասարաններուն մէջ շաբաթին 24 ժամ դաս կ'առանդուի։ Ուսման նիւթերն են — Կրօն և Բարոյականութիւն, Պատմութիւն և Աշխարհագրութիւն, Բնական Պատմութիւն, Գեղագրութիւն, Երգ, Նկար, Մարմնամարզութիւն, Ձեռագործք (աղջկանց համար)։ Յիւրիսէն և Վենիզելոսէն զատ, ուրիշ տեղեր տղայոց և աղջկանց դպրոցներն անբաժան են։ Երբ դպրոցն միայն մի ուսուցիչ ունի, պարտաւոր է աշակերտներն և աշակերտուհիները վեց դասակարգի բաժնել բոլոր տարիքների յարմարադիմութեան։ Ուսուցիչն մի դասակարգի հետ զբաղած ժամանակ միւսներուն պարապելու գործ կը յանձնէ և այսպէս կարող կը լինի թէ զբաղեցնել և թէ իւրաքանչիւր դասակարգերուն դաս հարցընել և դաս տալ։ Տասներկուերորդ տարւոյն մէջ հարցաքննութիւն կը լինի, որով կ'որոշուի թէ արդեօք մանուկն կարող է Կրկնութեան դպրոցն փոխադրուիլ թէ տակաւին պէտք է մնայ Իսկական կամ Իրական դպրոցին մէջ։

Նախնական դպրոցին մէջ կրօնական ուսումն դասատիարակն կ'ուսանդէ, իսկ Կրկնութեան դպրոցին մէջ հովիւն կամ քահանայն։

Դպրոցական վճարքն նախնական դպրոցի համար տարին 3 ֆրանկ է, իսկ Կրկնութեան դպրոցին համար 1 ֆրանկ 50 սանթիմ։ Աղքատ մանկանց համար բարեգործական պաշտօնատուներն կը վճարեն։

Ամեն մանկունք պէտք է որ ղբօսարանական վճարքն հատուցանեն, թէև երեք մանաւանդ դպրոցներ յաճախեն։ Մէկ մի մանուկ գործի մէջ չ'ընդունուիր եթէ կանոնաւոր ուսումն առած եւ ազատական քննութիւն տուած չէ։

Ուսուցչի թոշակն կը բաղկանայ աշակերտաց դպրոցական վճարքէն, ժողովրդապետութենէն որոշուած 200 ֆրանկէն, բնակարանէ, չափաւոր գեանով հանդերձ, վառելափայտէ, և Տէրութեան յատկացուած վճարումէն, որով թոշակն մինչեւ 700 ֆրանկի կը հասնի։ Տասներեք տարի ուսուցչութենէն ղինի վերադիր կը լինի 100 ֆրանկ, իսկ քսան և հինգ տարիէն ըլլ կընի՝ 300 ֆրանկ։

Դպրոցական ծախքերն ժողովրդապետութեան վերայ է։ Ամեն ժողովրդապետութիւն (commune) ունի դրամագլուխ, որոյ գումարն կը հասնի 6 միլիոն ֆրանկի։ Այս դրամագլխոյ եկամուտին հետ կը միանան տուգանքներն, ամուսնութեան պարգեւներն (առնուազն 5 ֆր.) կտակեալ և կամաւոր պարգեւներն, ամեն եկեղեցւոյ դրամաժողովութեան տարեկան արդիւնքն, հասարակութէ (commune) մէջ բնակութիւն հաստատելու իրաւանց համար վճարած տուրքն և այլն և այլն։ Եթէ այս եւս բաւական չը լինի, հասարակութիւնն ուրիշ միջոցներ ձեռք կ'առնու եւ երբէք իւր դպրոցի բարեկարգութիւնն չը խանգարեր։

Երկրորդական դպրոցներու (Secundarschulen) նպատակն է այն գիտութիւններն կամ ուսմունքներն ընդարձակել, զոր աշակերտք ուսած են նախնական դպրոցներու մէջ, առանց երբէք ժողովրդային կրթութեան սահմանէն անցնելու։ Նախնական դպրոցաց մէջ աւանդուած ուսմանց վերայ երկրորդական դպրոցներուն մէջ կը

յաւելման — անդաշափութիւն եւ շինական անտեսագիտութիւն և երբեմն մի օտար լեզու։ Ուսումնառութեան ջրջանն է երեք տարի. դպրոցական վճարքն է 24 ֆրանկ տարին աշակերտի կողմէն։

Ցիւրիխ ունի 59 երիտասարդական դպրոցներ կամ, 87 ուսուցիչներով, 2,313 աշակերտներով, յորոց 1,659 արական և 654 աղջկունք (1)։

Աշխատութեան կամ ձեռագործութեան դպրոցներն (Arbeitschulen) շաբաթն երկու կէս — օր, վեց ժամ, կը յաճախեն աշակերտուհիք։ Այս դպրոցներն հաստատուած են ձեռագործներ ուսուցանելու ազգիանց։ Ցիւրիխի լճի եղերքը, Կիւսնախտի մէջ, կայ ուսուցչական դպրոց, ուր կը յաճախեն հարիւրէն աւելի աշակերտք։ Բացի Տնօրէն—Տնօրէն, կան տասն ուսուցիչք և ծախք կը լինի 43,000 ֆր. ի տարին։ Այս դպրոցին կ'ելնեն նախնական դպրոցաց ուսուցիչներ, որով Ցիւրիխ Նահանգն կը հատուցանի Սաքսոնիային և Վիւրտեմբերգին։

Դպրոցական շէնքերն ընդհանրապէս շատ լաւ շինուած են և ամէն կարեւոր պիտոյքներ ունին։ Այս նկատմամբ նշանաւոր է Վենթերթուր, որ մի փոքրիկ քաղաք է և ունի 5,000 բնակիչ։ Վենթերթուր կրթութեան համար կառուցած է երեք պալատներ, որոց իւրաքանչիւրին համար, աւազան, 800,000 ֆրանկ ծախք եղած է։ Բացի ի նախնական դպրոցներէն, ունի մի քարձր դպրոց (Gymasium) արուեստական դպրոց, վիճին դպրոց և մի բարձր վարժարան աղջկանց համար։

Ցիւրիխ ունի իւր հայկական համալսարանն (Université) և բազմարուեստական դպրոցն (Polytechnicum)։ Զուիցերիոյ մէջ գտնուած պալատներն ուսման նպաստած են։

Նախնական ուսմանց համար եղած ծախքն կը հասնի մի և կէս միլիոն ֆրանկի, մարդապետքն 5 ֆրանկէն աւելի։ Կէս միլիոնն Նահանգն, և մի միլիոն հասարակութիւնները (Communes) կը վճարեն։

Ցիւրիխ ունի նմանապէս և կարեւոր դպրոց, ուր թէ ուսանողներ կ'ուսանին և թէ ձեռագործներ։

Սակայն այս եւս պէտք է ասել, որ բուն Զուիցերիայի օրիորդներն հասարատան և բազմարուեստական դպրոցն չեն յաճախեր, այլ յաճախողներն օտար երկրէ եկեալներ են եւ պետասրապէս Ռուսաստանէն, որոնք աւելի բժշկութեան սիրահար են, և այն եւս Ռուսիոյ Տէրութիւնն, զանազան նկատումներով, անցած տարի հրաման հանեց, որ կամ վերադառնան կամ Ցիւրիխէն հեռանան, յորոց ոմանք վերադարձան, ոմանք չկրնալով, և շատ տակուբ մնացին, Ռուսիա չը վերադառնալու պայմանաւ։

Մեր ճանապարհորդութեան ժամանակ շրջեկառաց կայարաններուն մէջ տեղ տեղ հանդիպեցանք սոյն կրուած օրիորդաց ոմանց, որոնք պատրաստականներն առած Ցիւրիխէն ուրիշ քաղաքներ կը գնային, արտունչ յայտնելով Ռուսիոյ կառավարութեան դէմ, որ ուրախացման կասկածներ ունի իրենց վերայ, իբր թէ, փոխանակ ուսման, անկարգական կեանք կը վարեն, մինչդեռ քաղաքագիտական Թաքուն դասընկերն այն էր, որ իբր թէ հան-

(1) Մեր տուած բոլոր տեղեկութիւնները 1872 թուականին նկատմամբ են, ի հարկէ այն տարին ի վեր Ժողովրդային կրթութիւնն աւելի յառաջ գնացած է. վասն զի դրեթէ ամէն տարի յառաջադիմական մեծամեծ և նպատակ փոփոխութիւններ կը լինին։

բավարարական դրութեան ընտելանալով և իրենց հայրենիքն վերադառնալով՝ կարեն վրդովիլ իրենց երկրի միապետական անդորրութիւնն։

« Ա՛հա, Էլճիպտա, կ'ասէր մի Ռուս օրիորդ իւր ընկերուհւոյն (երկամուրջի մէջ), սիրտս կը կծկի, երբ կը մտածեմ որ Ռուսաստանին մէջ մեր անունն իբրեւ անբարոյական կը հռչակուի եւ այս ճանապարհաւ ամէն տեղ մեր առջեւ կը փակուի։ Եթէ այս տեղ մնամք միշտ, մեր հայրենեաց և ծնողաց կարօտով պիտի այրուինք, եթէ վերադառնամք անգործ և տրտում պիտի մնանք։ Դու դիտես արդէն, թէ ինչ մեծ հակադրութիւն կայ Զուիցերիոյ մէջ բարոյականի մասին. դիտես որ գէն, որ Ռուսաստանէն նոր եկած ժամանակ մինչեւ անգամ Պօլիսիական կառավարութենէն ազդարարութիւն եղաւ մեզ, որ մեր ուսանական սիգար ծխելու սովորութիւնն յոռղունք եւ գայթակղութիւն չը տանք Զուիցերիոյ կանանց և օրիորդաց։ Բայց ինչ օգուտ, որ գարձեալ մեր անունն անբարոյական կը հռչակուի, մինչդեռ Ռուսաստանի կանանց կեանքն Զուիցերիոյ կանանց կեանքէն այնչափ տարբեր է, որ ամէն խորհելով աչքերս արտասուքներ կը հոսին։ Ա՛յսպէս կը վարձատրէ ահա մեր հայրենիքն մեր այսքան տարուան աշխատութիւնն եւ պանդխտութեան մէջ վարած անմեղութեամբ ղատրիճ կեանքն »։

Զուիցերիոյ մէջ նախնական ուսումն այնչափ հրապոյր և հաշակ ունի որ համբաւաւոր Անգլիան անգամ բազմաթիւ մանուկներ կը ղրկէ՝ ի Զուիցերիա, որոնք նախնական ուսումն աւարտելով՝ կը վերադառնան իրենց հայրենիքն եւ այն տեղ՝ ցանկացողք բարձրագոյն դպրոցներն կամ համալսարանն կը մտնեն։

Ցիւրիխէն յետոյ մեր ընտրած երկրորդ նահանգն է Նեվշատէլ, որ ունի 87,369 բնակիչ, յորոց 77,095 բողոքականն են։ Ըստ վիճակագրութեան 1865 Մարտիոյն ունի 303 դպրոցներ, 136 ուսուցիչներ և 169 ուսուցչուհիներ։ Դպրոցական չէնքերն հոյակապ և գեղատպաստաճ են։ Ծախքն երկու և կէս միլիոն։ Աշակերտաց և աշակերտուհւոց թիւն 16,405։

Դպրոցական տեղեկագրութիւնն գրեթէ համանման է Ցիւրիխ նահանգի տեղեկագրութեան։

Ցիւրիխ և Նեվշատէլ նահանգներու վերայ տուած տեղեկութիւնները բաւական կը համարիմք մեր ընթերցողաց, մոռնալ Զուիցերիոյ միւս 23 նահանգներն, որոց մէջ համանման ջանքեր և ծախքեր կը լինին ժողովրդային կրթութեան համար, և յառաջ կը բերեմք Պ. Էրնեստ Նաւիլ խօսքերն, զոր կը գրէր իւր մի բարեկամին ծընեալ նահանգի նկատմամբ. « Խիստ հազուագիւտ են մեր նահանգի մէջ այն մանուկներն, որոնք բնաւ կրթութիւն առած չեն։ Ամենեւին չեմ յիշեր, որ երբէք պատահած լինիմ, թէ քաղաքի և թէ գիւղի մէջ, մի ծերեվացի մարդոյ կամ կնոջ, որ կարդալ և գրել չիմանայ։ Ես ծենեվայի կ'ըստորագրեմ, որովհետեւ քանի մի ժամանակէն ի վեր օտարականներ շատ կը յաճախեն մեր նահանգն, որոնք ընդհանրապէս զուրկ են կրթութենէ »։

Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

Տ . Ներսիսի Ամենապատիւ Պատրիարքի Կ . Պոլսոյ :

Տէ՛ր Երեսփոխան Հայոց .

Յամենազօրն Աստուած և ի ձեր աղգասիրութիւնն ապաստան՝ ի յուսոյ կը բանամ այսօր Ազգ . ժողովը , մտաքնելով որ ձեր փորձառութեամբ և ջանիւք . օրինապահութեամբ և մի աբան ազգասիրութեամբ արդիւնաւորագոյն լինի ներկայ չրջանս :

Աղգային գործերն վարչութեան համարատուութիք ձեզ պիտի յայտնուին , ձեր խնամատութեանն պիտի կշռէք և գնահատէք զանոնք :

Ա յժմէն կարող եմ ըսել թէ յաբեբերութեանց և ժողովոց կանոնաւորութեան և գործոց կարգադրութեան համար՝ ոչ ձեր կողմանէ և ոչ մեր ու ժողովոյ և խորհրդոց կողմանէ աչխատութիւն և ջանք չպակսեցան : Գաւառացի ազգայնոց կալուածական խնդիրներն որ մեր նախորդներէն ժառանգած էինք , Բ . Դրան մատուցաւելով յուսադրիչ խոստումներ տրուեցան : Բազուկ ի կուսակցաց մեր մեր սերմական գրութիւններն ուչադրութեան առնլով բաւական գործեր կատարել բարեհաճեցան :

Աղգային եկեմտաքն , ընտրհիւ երկու բարերարաց որ հին պարտքը վճարեցին եւ զորս ձեր ընտրհակալութեան քուէտվը մեծարեցիք , ընտրհիւ ձեր քուէարկած հանգանակութեան օրինաց , նա մանաւանդ ընտրհիւ ամեն ազգայնոց , երբ ըստ օրինաց փութան իրենց պարտքը կատարել , յուսամ որ գոհացուցիչ վիճակ մը կ'առնու : Ձեզ ներկայանալի տարեկան պիւտճէին պիտի տեսնէք զայս և ըստ այնմ դատէք :

Տեսչք Երեսփոխանք , իորին և եկեղեցական ընտրհակալութիւն կը մատուցանեմ Ձեզ և ինձ գործակից ժողովոց և խորհրդոց՝ այն վստահութեան համար որով պատուեցիք զիս դուք և նոքա . զի գիտեմ որ ես աշխատժան էի առաջ . քանզի իմ պակասութիւններս և սխալներս ամենէն աչքէն ինձ յայտնի են : Ազգը գոհ ընելու համար աչխատելու կամք չպակսիր ինձմէ , բայց գլխաւոր բան մը կը պակսի , առանց որոյ անկարելի է յաջողութեամբ գործել ընդ ծանր պատասխանատուութեամբ , այն է կատարեալ առողջութիւն :

Անցեալ տարի այս օրերս էր զիս Պատրիարք ընտրեցիք . աղաչեցի ըզձեզ որ արժանաւորագոյն մը բարձրացնեք այս աթոռին վրայ . չուզեցիք լսել և ես հնազանդութեան փորձը ցուցի : Այսօր իրաւունք ունիմ թախանձագին պաղատիլ Ձեզ , բաւական համարեցէք և հաճեցէք փութով ուրիշ մ' ընտրելու փոխանակ իմ . ես պատրաստ եմ իբր մին ի վարդապետաց ազգիս իմովհանն ծառայել մինչ պէս յառաջ :

Պատրիարքն ազգին ամենէն զօրաւոր գործին պէտք է ըլլայ . ես մաշած գործիք մ' եմ , առողջ միտք յառողջ մարմնի , կրսէ հին առածը :

Ձմռան ընթացքն գլխուս թմրած է և մտայ կորով չէ մնացած ի յիս , քանզի ամեն առեներէ աւելի փափուկ է այս ժամանակս , ուստի և մեծ ու հզօր հանճարոյ գլխուս և յոյժ լայն ու դիմացկուն սրտի գործ է ներկայ Պատրիարքութիւնը . զայս կանխաւ գիտեի , կրզգամ և այսօր , բայց ոչ չանիմ տակալու . արիութիւն , համբերութիւն , եռանդեան զոպաւմն ,

ջքնհ պեցուԹիւն , յորաժամ արԹնուԹիւն , ի ժամու և ատրաժամու վտվաղումն , կրակի վրայ ջկջուցանող ջուր , անկենդանուԹեան վրայ բորբոքիչ հուր , լոյս , հոգի , սեր , խաղաղուԹիւն , ծեր , տղայ , դեղ , դարման , մխիԹարուԹիւն , օրինակ բարեաց , մի ով բանիս ամենայն ինչ է Պատրիարքը :

Ուրեմն կը խնդրեմ և կը պաղատիմ , ընթերցէք արժանաւորագոյն մը որ գոնէ փոքր ի շատէ այս հանգամանքներն ունենայ :

Չի մեք պարտիմք անդուլ մնդա ղ որ բայց լուրջ և հանդարտ կերպով աչխատիլ դիմելու : Գիտնալու ենք որ անհուն պիտոյք ունիմք լցնելու . մեր բարոյական մտաւորական և նիւԹական վիճակաց բարեփոխումն այրուաւ ջհնդուԹեանս պէտք ունի : Մեք եկեղեցիներ , դպրոցներ , հիւանդանոցներ ունիմք , սակայն մեր այս ազգային հաստատուԹիւնք մեծամեծ բարեկարգուԹեանց և անոնց ապահովուԹիւնքն մեծ ջանից կարօտ են ,

Ուսումը տարածելու համար մեծամեծ ջանքեր ընելու ենք . զի տակաւին ոգխուուԹիւնը իւր անբաժանելի ընկեր ԹշուառուԹեամբ մեծամեծ նախիրներ կը գործէ շատ տեղեր և գրեԹէ ամեն տեղ : Աղգային դաստիարակուԹիւնն իւր խանձարրոց մէջն է տակաւին Թէև ուսումնարաններ ունինք : Եկեղեցականաց բարեկարգուԹիւնն եւ նուիրապետական դասակարգուԹիւնը որ հոգին է եկեղեցականուԹեան , տակաւին մեծ ձգդանց կը կարօտին , Թէ և ուսեալ , բարեկիրԹ , լեզուագէտ և սրբակրօն եկեղեցականներ ունիմք :

Ունիմք ազգային ՍահմանադրուԹիւն , օրինաւորապէս քսան ՍահմանադրուԹեան ընտրեալ ժողովներ , Գաւառական ժողովներ , Կրօնական Քաղաքական ժողովներ , Ուսումնական , Տնտեսական , Եւլն մոխիր խորհուրդներ և այլն , Թէ այս տեղ և Թէ գաւառներն , բայց դեռ բեզմնաւոր արդիւնքներ տեսնելէ բաւական հեռի ենք :

Ունիմք , փառք Աստուծոյ , ողորմած դրամատէրեր , հարուստ և վեհանձն վաճառականներ , հանճարաւոր և ազգին պատիւ բերող անհատներ , սակայն անհամար ընտանիք , երիտասարդ անձինք , Թէ ասա և Թէ ի գաւառս , անգործուԹեամբ և նորա հետեւանք դառն աղքատուԹեամբ կը տառապին , և դեռ չեմք կարողացած ընկերաց Թիւններ , գործարաններ , արհեստանոցներ կազմել , կանգնել , որպէս զի գործ և կեանք մատակարարեմք այդ տառապեալ : Թէ և պէտք չէ մոռնալ որ այս տարաբաղդ սովէն նեղեալներուն ոչ սակաւ նպաստամատոյց եղան վեհանձն ազգայինք , ժամանակիս բերմունքն և տագնապային պահանջմունքը խիստ շատ են : Պէտք չէ յաւակնիմք Թէ մեր պարտքերն կատարած ենք , զի ամենուս բացն մէկտեղելով անհուն պիտոյից հետ բաղդատմամբ աննշան և անշմարելի բան մը կը գտնեմք : Սակայն և ոչ նուազելի է պղերգուԹեամբ եւ յուսահատուԹեամբ ձեռնԹափ լինել , անդադար աշխատելու ենք , բայց խոհեմուԹեամբ , և գիտնալու ենք որ ամեն բան իսկոյն միատեղ չեմք կրնար կատարել , բարձր դիրքէ մը ազգային ընդարձակագաւառ անմշակ դաշտը տեսնել մէկ ակնթարթի մէջ կատելի է , սակայն հոն արշաւել , քննել , մշակել , անոր ժեռուտ , քարուտ , մայրուտ , ձախճախուտ տեղերն արգաւանդահող ընելն հարկաւ կատարելագոյն գործիքներու , ապահով

միջոցներու, բազում քրտանց և երկա-
րատեւ ժամանակաց կը կարօտի. քան-
զի վհատք մեզ արձակ ընդարձակ չէ
մեր ընծայած ճանապարհը, մեզ բիւրեղ
արգելքներ, քանիքանի զրկաւոր շա-
հերու ընդհարումներ եւ այդ առատիկ
ընդհարումներէն ինչ փշրուելու վը-
տանգներ կան հոն. ուստի մեր գոր-
ծը կամնաւոր յարատեւութեամբ եւ
ոչ յոխորտն ամառապատնաք յառաջ
վարելու համ:

Գիտէք որ անհամար վէրքեր ու-
նիմք բուժելու եւ առանց գէմ անհա-
մար տեսակաց ախտերունք. սակայն գի-
տէք նաեւ որ առանցմէ ազգազատ պէրը
որաչէն է գործը, զի այս երկիրը՝ մա-
նաւանդ տեսականին ու գործնական-
նին մէջ՝ անհատն տարրերութիւն կայ,
հասուս գործիքին՝ ազգազատ գերին
ընտրութիւնը գործոյ և փութոյ պա-
դմունք պիտի լինի. իմ գիտցած մէկ
երկիւղս սա է որ չըլլայ թէ՝ ի խնդիր
լաւագոյնին՝ լաւը կորսնցնենք: Մեր
ծրագիրը կամ յատակագիծը պէտք է
լինի աննուաճելի փափաք միշտ դէպ
ի յառաջդիմութիւն. իրական վազ-
վազկոտ և խիզախ յանգգնութենէ և
մեռելատիպ թմրութենէ միանգամայն
հաւատարակէս հեռանալ. առանց մը-
խորի ժամ առ ժամ դէպ ի լաւագոյ-
նը նկրտիլ: Մեր ազգին քաղաքակա-
նութիւնն այսպէս կը հասկնամ, զգու-
շաւոր ընթացքով, խոհեմ արիու-
թիւն, ձեռքերնիս ունեցածնիս վըտ-
տալով նոր վտանգի եռեւէ ըլլալ,
միշտ գործել առաւելքան մեզ խօսիլ,
և ներկային անմտատակ դրգռութիւն-
ներէն խուսափելով ապագայն չմեռցնել.
հնազոյր խղճերն անտեսել, հասարա-
կաց ուղղախոհ կարծիք, ժուխք տա-
րածել. զի այն բաներն զգոյս մեք չեմք
կարող այսօր յորդիւնն ածել, հասա-
րակաց բանաւորութիւնը լուսաւո-
րութեամբ կարող է օր մը հրապարակել.
մեր սերտ միութիւնն մեր մէջ ազ-
գային ոգին անմոռանալի և անխա-
տնելի պահել քաղցրահամ սոյզ փափուկ
պատգամ մը պէս, որ խիտ և կարծր
կերպեւոք շուրջ պատեալ անվնաս կը
մնայ արտաքին փոփոխական օդոյ ազ-
դեցութենէն:

Ա յժմ հասկցած էք գործ, տեսնէք
երեսփոխանք, որ մեր այս պահպանո-
կը, ուզեցողը, և այն, չնորհիւ Օս-
մանեան պետութեան մեր ազգային
Սահմանադրութենն է պատշաճ վի-
րաբերութեամբ հանդերձ:

Օն ուրեմն ժամ է արդ, նոր Պատ-
րիարքի ընտրութեան հետ Ձեր օրա-
կարգին մէջ էն ձերպազին և Ձեր նոր
ընկանին մէջ էն կարեւոր և առաջին
գաստառած խնդիրն լուծեցէք. աններ-
ելի է այլ եւս յապաղեցնել ատոր լու-
ծումն. այս հնգետասանամեայ փորձ
և Ձեր գիտանին վրայ գտնուած շատ
մը գիտողութիւններ եւ ծրագիրներ
զՁեզ լուսաւորելով շատով վախճան
պիտի տայք անշուշտ այս գործոյն.
հարկ չէ ըսել թէ կանոնը արդարի պարզ
ութիւն առանձայ, այնչափ աւելի
դիւրընթաց կըլլայ:

Պէտք է որ համոզուելով վճռեք
թէ գաւառներու և նոյն իսկ Պոլսոյ
մէջ Գործադիր ժողովներն ու Տեսուչ
խորհուրդներն սահմանութիւն անձինք-
ներէ բաղկացած ըլլան, և Գործադիր
իշխանութեան միամիտակ ուսումնա-
խագահին արտօնութիւն տայք ան-
գործադրելի կէտերն իսկոյն վերքննե-
նութեան ենթարկելու:

Տէ՛ր Եղիազարեան.

Հայոց ժողովս ըդն յոյսը Ձեր վրայ
դրած է, ամէն բան իր Պատրիարքին,
Ձեզնէ և Սահմանադրութենէն կ'սպա-
սէ. ծանր է ձեր և մանաւանդ Պատ-

բիա քին պատասխանատուութիւնը, և ծանրագոյն պիտի ըլլայ, եթէ իւրայ վնասին ընդ փոխն ի նպատակ չառնուի, եթէ գրեթէ միահաղոյն նոր ուխտ մը չընէք նոր ոգւով գործելու. զի եթէ Սահմանագրութիւնն ալ փոխեմք ու մեր գլուխ չփոխեմք, այսինքն նոր ոգի, նոր գործունէութիւն, հաստատուն կամք չառնուինք, հաղուստը միայն փոխելով ինքզինք քաղաքակիրթ համարող մարդոց նմանած կըլլանք:

Ձեր երկրորդ և յոյժ կարեւորագոյն և մահու և կենաց խնդիրն ազգային դաստիարակութիւնն է. Սահմանագրութեան բարիքը պէտք է փայլեցնել, Թաղական վարժարաններն և անոնց մատակարարութիւնները բարւոքելով, պիւտճէն ընդարձակելով, կեդրոնական վարժարան հաստատելով ուսմանց ծրագիրները կատարելագործելով, և գաղափարները միացնելու համար դաստիարակութիւնը միակերպելով, նոր երկսեռ նախակրթարաններ, նոր երկրորդական վարժարաններ բազմացուցանելով, ալ այդ գպրոցները պիտի բուսցնեն մեզ բարեկիրթ ծնեալսէր մայրեր, եկեղեցւոյ արժանաւորագոյն պաշտօնեաներ, ազգային ժողովոց արիւնն և ազգասէր անդամներ, և լուսամիտ գործունեայ և պատուական և իւր գործը ջինող ժողովուրդ:

Երբ այսպէս բարեկարգ դպրոցներ, բարեկարգ վանքեր, վարժապետանոցներ, արհեստանոցներ և այլն ունենանք, երբ ազգին և տէրութեան սիւտանի քաղաքացիները սկսին ենթել մեր գպրոցներէն, այն ատեն Սահմանադրութիւնը մեռեալ տառ մը չմնալով իւր արդիւնքը ցուցուած և տէրութեան ու ազգին մէկ խոստ պատուական օրինագիրքն եղած կըլլայ: Ձեր անունն ալ ոսկեգիր սերնդէն օրհնեալ կ'օրհնուի սակէզէն տառերով գրուելով մեր պատմութեան մէջ:

Երեսփոխան Տէր՛ .

Պէտք է յիշէք նաև որ այսօր՝ հինգշաբաթի Սահմանագրութեան տարեդարձի ամսոյս երկրորդ օրն՝ այս ժողովոյս բացման առեն՝ այս հանդիսաւոր վայրկենիս՝ մեր ամենուս պարտքըն է բարեբաստիկ երկայն աւուրս մաղթել մեր Օգոստափառ կայսեր, որոյ հսկանաւորութեամբը մեր կրօնը կը պաշտեմք, մեր լեզուն կը մշակեմք, մեր ազգ.քն ազգային ոգւով կը կըրթեմք ու եկեղեցւոյ և ազգային գործերը կը վարեմք ըստ Սահմանագրութեան: Օսմանեան վեհապետաց հովանին բարիք մը եղած է մեր ազգին. կեցցէ ուրեմն մեր Օգոստափառ ինքնակալն Սուլթան Ապտիւլ Ազիզ խան:

Վերջացնելով խօսքս, ղԶեզ, Տէրք Երեսփոխանք, Աստուածային պաշտպանութեան կը յանձնեմ, մաղթելով որ Հայաստանեայց Ամենասուրբ Հայրապետ Տէր Յիսուս բանն Աստուծոյ հաճեսցի վարել ձեր ջանասիրութիւնը յաջողին և օգտակար, և Հոգին Սուրբ, հոգի սիրոյ, հանգարտոյ և միութեան, տառատնեսլով ձեր մտաց վայր, տածէ և լուսաւորէ Ձեր խորհուրդներն այժմ և միշտ և յաւիտեանս ամէն:

ՄԻՐԶԱՑ ԱՌ ՄԱՍԻՍ

Ո՛վ Մասիս , Մասիս , դու լինչի՞ կդպչես
Սիսլուակ [1] գլուխդ սեւ քողով ծածկել ես ,
Սգաւոր կնկան [2] նման ոտդ նստած
Գիշեր ցերեկ անվհտիմար լալիս ես ։
Ինչի՞ կդքան ո՛հ , գոռում ես գոչում ,
Լալով , ողբալով աշխարհ խրոովում ,
Գարերով աչացդ լոյսն մըթացնում
Հարա՞յ , մադամ [3] միչտ կդ ո՞ւմ ես կանչում ։
Փառք Աստուծոյ , Դրախտ ունիս ծոցումդ ,
Նոյեան տապանըն կդ բարձր , ծեր գլխումդ ,
Էջմիածինն ալ , Խոչբիկիսկն ձախումդ ,
Բարթողիմէոս , Թադէոս կըռնակումդ ։
Ագռաւ , Սեպուհ , Սիսան վհո՛ւ սարերն ,
Պատած են քո ամեն կողմերըն
Եփրատ , Տիգրիս , Փիսոնն , Արաքս գետերն
Ողողում են քո անուման հողերն ։
Դեռ շէն են դիւղ ու քաղաքներդ
Սուրբ տէոռներդ , պայծառ վանքերդ
Արծուն հայրապետք , ժիր վարդապետներդ
Դեռ մայրենի դրկում զուարկ ու թռուներդ ։
Էլ ինչ է քո ցաւն , Թադուհի Մասիս ,
Հերիք եդքան լաս , սգաս , ու կծկիս ,
Դէ արի իմ սիրտըն մի կատրի ,
Սեւ շորերդ վոխիր , որ դէմքդ ծիծաղի ։
Զմեռն անցաւ , Մասիս , Մարտն հեռը ,
Մայիսն եկն կարմիր վարդն հեռը ,
Մարդ , անասուն ոզջ ուրախ են ,
Ինչի՞ քո դէմքն միայն տխուր են ։
Իմ քաջ Մասիս , զարդ Հայաստանի ,
Արի քեզ մխիթար , էլ դարս [4] մի անի ,
Աստուած դժած է , ազգմունիմն կ'անի ,
Այս յուսով կ'ապրի ՄԻՐԶԱՑ պատանի ։

1 · Սիսպակ — սպիտակ ։ 2 · Կնկան — կնոջ ։ 3 · Հապա , Մադամ — յօդնաբիմն հատիկ ։ 4 · Դարթ · հոգ · ցաւ ։

ՄԱՍԻՍ ԱՒ ՄԻՐԶԱՑ

Գնա՛, անշարժ Լմո՛ղ, աղնիւ պատանեակ,
Քո Մասիսի սեւ քնարն ոսքերգակ,
Մի՛ չարժեր սրտիս ոգուար Թիւերն,
Որպէս վի՛ զ լսես սխուր եղանակ.
Էլ քո Արարատ ի՞նչպէս սուգ չ՚անի,
Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի։
Ա՛խ, Միրզայ, Միրզայ, սիրուն պատանի,
Մուսայդ երգաբան՝ խեղճ Հայաստանի,
Ցաւերս բիւրաւոր, վիշտերս գարաւոր.
Ա՛յրի Թագուհիս մեզր Հայաստանի.
Էլ քո Արարատ ի՞նչպէս սուգ չ՚անի,
Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի.
Ո՞ւր է իմ Թագրն, ո՞ւր իմ գաւազան,
Ո՞ւր իմ Թագաւոր, ո՞ւր գահ անուանի,
Ո՞ւր որդիք, Թոռունք, ո՞ւր իմ քաջազունք,
Ո՞ւր իմ ծիրանի, զարդեր զանազան.
Էլ քո Արարատ ի՞նչպէս կոծ չ՚անի,
Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի։
Խոզեր պղծեցին իմ ծոյլ դրախտը,
Օտարք քաղեցին պարտիզիս վարդը,
Ա՛խ, վարդի կարօտ սիւլսիւլ մնացի,
Նենգեցին դրացիքս, մոռցաւ զիս բախտը.
Էլ քո Արարատ ի՞նչպէս կոծ չ՚անի,
Երբ իւր իւր խեղճ սիւլսիւլ անվարդ միշտ կայրի.
Աեպուհ, Աբաւած, Սիփան խեղճ սարերն
Են իմ արիւնոտ Թշուառ կողերն,
Եփրատ, Տիգրիս, Փիսոնն, Աբաթս գետերն
Են աչքիցս վազող պղտոր ջուրերըն.
Էլ քո Արարատ ի՞նչպէս սուգ չ՚անի,
Երբ իւր ջջապատն էս հալում տեսնի։
Էն փառքն ունէին գիւղ ու քաղաքներս,
Սուրբ Աթոռներս, անուանի վանքերս,
Էն պէս հայրապետք, էն պէս վարդապետք,
Էն պէս ցիր ու ցան զաւակ ու Թոռներս.
Էլ քո Արարատ ի՞նչպէս սուգ չ՚անի,
Երբ իւր Հայաստան էս հալում տեսնի։

1. Հայոց — վէմական մէջ։

Ես մեծ վէրք ունիմ վէց հարիւր տարուան,
Որ միշտ ճնում են անքոյժ, անդարման,
Սեւս ինչպէս փոխեմ, սիրուն Միրզոյեան,
Առանց իմ սրտի ներքին խնդութեան.
Էլ քո խեղճ Մասիս ինչպէս ծիծաղի,
Մինչ անբուժելի շատ վէրքեր ունի.
Իմ Մասիսն անցաւ վարդ, մխիթին հետը,
Զինէն, Ձմեռ եկին մշտատեւ Մարտն հետը
Փոխան լալագին իմ անուէր թշուներ,
Իմ սիրան էլ տարան, ամէն, իրանց հետը.
Էլ քո խեղճ Մասիս ինչպէս ծիծաղի,
Մինչդեռ իւր թշուներն թշուառ կը տեսնի:
Ո՞ր իմ Հայկազուն, քաջայաղթ արքայք
Ո՞ր Զարմայր, Տիգրան, Հայկ եւ Արմենակ,
Ո՞ր Խոսրով, Տրդատ, ո՞ր Վաչէ, Արշակ,
Ո՞ր Վահագն, Գագիկ, եւ ո՞ր Վաղարշակ.
Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,
Երբ իւր Հայաստան անուէր կը տեսնի.
Ո՞ր իմ զօրավարք յաղթող, ախոյեան,
Ո՞ր Վարդան, Տաճատ վեհ Մամիկոնեան,
Ո՞ր Խորէն, Մուշեղ, Արտակ, Համազասպ,
Ո՞ր Սուրէն, Սմբատ եւ. հուժկուն Վահան.
Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,
Երբ իւր զօրավարք ննջած կը տեսնի:
Ո՜հ, կար ժամանակ իմ մեծ Տէրութեան,
Որով սարսում էին Տէրութիւնք համայն,
("Ձայն տուէք գնդին Աթաբատեան,
Թագաւորութեանն Արարատեան").
Գոչում էր յերկինից բարձր ձայն Աստուծոյ,
Մահ սպառնալով Աղուին Տիտանեան.
Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,
Երբ Հայկայ երկիրն անուէր կը տեսնի:
Ո՛չ ոք չէ կարող խըմել իմ բաժակ,
Քանզի դառն է յոյժ զերթ լեղի խառնակ,
Ո՛չ ոք չէ կարող տոկալ իմ ցաւոց,
Սոսկում կը նիւթէ նոցայն խիստ ճաշակ.
Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,
Որ ցաւոց լեղի մրուքն կը քամի.
Ի՞նչ են, Մերոյ, վէրք, ցաւք, կսկիծք Յովքայ,
Անթիւ, անսահման ցաւոց մեռ Մասայ,
Յովք փոքր ինչ յետոյ կորուսանն դառաւ,
Իսկ իմն յաւիտեան անպիւտ կը մընայ.

Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,
Երբ էսպէս անգիւտ, մեծ կորուստ ունի։
Բաբէ, ինչ են ողբ, սուգ Երեմիեայ,
Անբաւ ողբոց մօտ խեղճ Արարատայ,
Ի՞նչ կարճ գերութիւն զաւակաց Յուդայ,
Անվերջ գերութեանց մօտ Թուանց Հայկայ.
Էլ քո Արարատ ինչէս սուգ չ'անի,
Երբ իւր զաւակներ միշտ գերի տեսնի։
Վ՚ասն զի աղաւիւք Հրեից աղքին,
Իրանց հետ պատրաստ, անբաժան կային,
Մովսէս իբր աստուած Փարաւոնի մօտ,
Եսթեր Թագուհին Արտաշէսի մօտ.
Սուրբ Եղեկիա Տաճարին միջում,
Եւ մեծ Դանիէլ Բաղդասարի մօտ։
Իսկ մասնիչք իբր ցեց անբաժան յաղթիս,
Բաբէ, Գագկայ մօտ լերք վեհան Սարգիս,
Քաջ Վարդանի մօտ Սիւնին Վասակ,
Մեծն Ներսիսի մօտ Պապ Թունաւորիչ,
Վեհ Սմբատի մօտ նենգող Մեհրուժան,
Աշտարակեցւոյն մօտ Գիւրատ դաւաճան.
Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,
Երբ իւր ծոցում իժ օձեր կը տեսնի։
Զարս անգամ մեռաւ նենգ մարդոց ձեռօք,
Զարս անգամ յարեաւ քաջ անձանց ձեռօք,
Հզօր Տէրութիւնս, ակն, հոգին փչեց,
Վերջին անգամ, ահ, վատ մարդոց ձեռօք.
Էլ քո Արարատ ինչպէս չի կոծի,
Երբ իւր տէրութեան Թշուառ մահն տեսնի։
Երբ իմ զաւակներ օտար հողերում,
Մասիս, Հայաստան կանչում, ակն, քաշում,
Աչքերն պղտորում, սրտերն խորովում,
Ձեռքերն խաչ անում, հոգիքն աւանդում.
Էլ քո Արարատ ինչպէս սուգ չ'անի,
Երբ իւր զաւակներ էս հալում տեսնի։
Բայց Միրզայ, երբ Աստուած ողորմի,
Եւ իմ նախնի փառք ու պատիւ նորոգի,
Ահ, այն ժամանակ քո Մասիս սարըն
Մեծ ուրախութեամբ սեւերն կը փոխի.
Էլ քո Արարատ միթէ սուգ կանի,
Երբ իւր Հայաստան նորոգուած տեսնի։

Ա. Գ. Բ.

ԿՆՆՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ (ԴՕՔ ՏՈՐԻ) ԱՍՏԻՃԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Քաղաքագէտ Բարգմանութիւն Ռուսաց ԳՕԼՕՍ (Ձայն) լրագրէն։

«Պետրբուրգի Համալսարանի և Ակադեմիայի Եկեղեցական Պատմութեան ուսուցիչ Պ. Ի. Տրոիցկին, Ապրիլի 27ին, Կիրակի օրն, Ակադեմիայի մէջ պաշտպանեց վարդապետութեան աստիճան ստանալու համար գրած իւր քննական աշխատասիրութիւնն, որ ունէր այսպիսի վերնագիր. «Բայսթրութիւն դաւանութեան Հայապանծայց Եկեղեցոյ, զոր գրեաց Ներսես Շնորհալի ի թուղթսն Կիւ Մանուէլ Կայսեր Յունաց։ — Պատմական և վարդապետական հետազօտութիւն յաղագս միաբանելոյ զնեղեցին Հայոց ընդ Եկեղեցւոյն Ռուսաց»։

Աստուածաբանութեան վարդապետի աստիճանի հետամուտ հեղինակն իւր գրուածքի ներածութեան մէջ ցոյց տալով Հայոց Եկեղեցւոյ Ռուսականին հետ միանելու միջոցներն, որոնք իրարմէ կը տարբերին ոչ միայն ծիսիւ, այլ եւ վարդապետութեամբ, յառաջ բերաւ ինչ ինչ տեսական վարդապետութիւններ և ջանայ բացատրել Հայոց Եկեղեցւոյ խոտորման պատճառները Ռուսականին և միանալու հնարքները։

Հայաստան լինելով երկու հզօր տէրութեանց մէջ — Յունականին եւ Պարսկականին — մեծ նշանակութիւն ունէր իւր Եկեղեցւոյ բաժանումն Յունականէն։ Հայաստան պաշտպանելով իւր կրօնական շահն ընդդէմ այլակրօն Պարսից, մի և նոյն ժամանակ պարտաւորուած էր պաշտպանել իւր ազգային շահն ընդդէմ Բիւզանդիական կայսերութեան։ Հայաստան չը կամենալով քաղաքականապէս հպատակիլ Բիւզանդիայի ազդեցութեան, բողոք յարոյց նորա դէմ ըստ կրօնականին և խոտորեցաւ ի կողմն միաբնակաց, որք հալածանք կը կրէին Բիւզանդիայի մէջ։ Ահա այս պատճառաւ, որ ջանի որ փորձ փորձուեցաւ Հայոց Եկեղեցին Յունականին հետ միացնել, ամէն փորձեր ի դերեւ ելին, որովհետեւ ազգային և քաղաքական շահերն միշտ կրօնականին հետ կը խառնուէին։

Այս ազգային և քաղաքական դիւրաւորութեանց բարձումէն կախեալ է միութեան դործոյն յաջող կատարածը։ Եւ ահա Հայոց Եկեղեցին Ռուսականին հետ միացնելու համար պէտք է ազգայինն և ժողովրդայինն թողուլ և մեկ եկեղեցական խնդիր նկատել։ Աւելի լաւ կը լինի այն կէտին հասցնել խնդիրն, որ Հայք ճանաչելով Ռուսական ուղղափառութենէն խոտորելու նշանակութիւնն և վնասն, ինքնին կարօտին և ստիպուին միանալու, առանց արտաքին ազդեցութեանց։

Վարդապետութեան աստիճանի հետամուտ հեղինակի սոյն խօսքերուն նկատմամբ դիտողութիւններ եղան Ի. սիդօր Մետրոպոլիտի կողմէն, որ կը նախագահէր քննական մրցման առեն։

Տրոիցկու պաշտօնական քննիչներէն կամ ընդդիմաբաններէն առաջինն Պ. Զեզով, գրուածքին երկրորդ մասն ընդունեց իբրեւ ամենայն մասամբ կատարեալ, ուր յառաջ բերուած էին այնպիսի պատմական յիշատակարանները, որոնք իրրեւ ձեռագիր անծանօթ մնացած էին Մոսկուայի Սիւնոդական մատենադարանին մէջ։ Իսկ առաջին մասին համար Պ. Զեզ-

ցավ յայտնել, որ արեւմտեան դիւանակատաց ազդեցութեամբ եւ հետեւողութեամբ գրուած է, այն է Նորվեգացի Կաստարի եւ Գերմանացի Բաուէրի, որոց սխալներն կրկնուած են Տը Բոյիկու. աշխատասիրութեան մէջ։ Օրինակի համար, ինչպէս Կաստարի, նոյնպէս եւ Տրոյիկի Հայոց Հաւատոյ Հանգանակին, զոր Ռուսերէն Թարգմանած է Յակէպի Արքեպիսկոպոսն, Նիկիական չէն ընդունիր, իբրեւ գործ Մեծին Ամմանասի, այլ կը համարին իբրեւ Նիկիականին վերայ յերիւրուած քան մի։ Սակայն սխալ է այս կարծիքն, վասն զի Հայոց Հանգանակն այնչափ Նիկիական է, որչափ եւ Ռուսացն, ի բաց առեալ միաբնութեան ասելն։ Մանաւանդ որ Նիկիական Հանգանակ ասելով միշ Թէ այն կ'ինամցուի, զոր կարդացին եւ ատորագրեցին Հարք առաջին տիեզերական ժողովոյ (որ է Հանգանակ Կեսարիոյ եկեղեցւոյն) այլ կ'ինամցուի ամեն Հանգանակ, որ կազմուած է Նիկիական Հանգանակի հոգւով եւ որ համաձայն է առաջին տիեզերական ժողովոյ վարդապետական ուսման։ Կաստարի կարծիքն սխալ է նաեւ Հայոց Հանգանակի ծագման ժամանակին նկատմամբ։

Պ. Զելցով բաղդատելին դիւանական եւ բառական գտաւ Պ. Տրոյիկու հաւատական աշխատութիւնն, որով բաղդատած եւ իրար խառնած էր զանազան Հանգանակներն։ Իսկ յերկո՝ բնութենից եւ յերկու բնութիւնս խօսքերն, զոր համիմատ բացատրած էր Տրոյիկի, հերքեց Պ. Զելցով, յայտնելով որ նոյնիմաստ չեն, ինչպէս որ Հայք եւս առաջինն կ'ընդունին, բայց երկրորդն՝ ոչ, հարկաւ ատրքերութիւն նշմարելով։

Պ. Զելցով ընդդէմ Տրոյիկու՝ երկարօրէն բացատրեց նմանապէս, որ միաբնութեան հերետիկոսութիւնն եւտիքեսէն չէ սկսած, այլ առաջուց, քանզի հերետիկոսութիւններն դարերով կը շարունակին եւ ապա ձեւ կ'ընդունին։ Եւտիքեսի ժամանակ միայն ձեւ ստացաւ նոյն հերետիկոսութիւնն եւ ոչ թէ նոր սկսաւ։

Պ. Տրոյիկի ընդդէմ Զելցովի ջանայ պաշտպանել իւր գրուածքի առաջին մասն, յայտնելով որ ամենէն շատ պայծառացած է եւ երբէք ենթարկուած չէ Արեւելեան դիւանականաց ազդեցութեան։

Պ. Զելցով նկատողութեան առնելով Պ. Տրոյիկու գրուածքի երկրորդ մասն՝ յայտնեց թէ՝ Հայոց եկեղեցին Ռուսականին հետ միացնելու համար ամենեւին հարկ չը կայ Հայերն հրաւիրել, որ համաձայնին վարդապետութեամբ եւ ծիսիւ։ Քրիստոնէութեան մէջ առաջին պայմանն է հոգւով եւ ճշմարտութեամբ երկրպագութիւն, իսկ ծէսն ամենեւին կարեւորութիւն չունի, այլ կարող է փոխիլ ի զանազան ժամանակս եւ ի տեղիս։ Եւ երբ Պ. Տրոյիկի պատասխանեց թէ Հայոց ծէսերն սերտ կապակցութիւն ունին իրենց սխալ վարդապետութեան հետ եւ գրեթէ իրենց վարդապետական մոլորութեանց ցոլմունքներն են, Պ. Զելցով դիտեց, թէ բազմաթիւ ի Հայոց՝ վարդապետական ուսմունքներն ամենեւին չեն միացնէր ծէսից եւ արարողութենից հետ։ Իւր խօսքն հաստատելու համար, ի միջի այլոց, յառաջ բերաւ՝ թէ Հայք առանձին չեն ածներ Յիսուսի Քրիստոսի Ծնունդն։ Կ'ասեն թէ՝ Հայոց եկեղեցին կը մերժէ սոյն Տօնն եւ որպէս թէ չը հաւատար մարմնառութեան Բանին Աստուծոյ։ Սակայն այսպէս չէ։ Մինչեւ 380 Թուականն ամենեւին Ծննդեան տօն չը կար Արեւելքի մէջ։

Երթայական տեսութիւնն կամ գաղափարն տակաւին կը թագաւորէր Արեւելքի մէջ և կարեւոր չէր համարուեր տօնել Յիսուսի Ծրիստոսի Ծնունդն, որ կատարուած էր անցեալ ժամանակի մէջ, այլ արժան կը դատուէր տօնել միայն միառաւոր Առաւածայայտնութիւնը իսկ Աբրեւմտեան, որովհետեւ ծննդեան օրերն տօնելու հնաւանդ սովորութիւն կար, այն սովորութեան հետեւութեամբ տօնուեցաւ և Յիսուսի Ծրիստոսի Ծնունդն և այն տեղէն տարածեցաւ Աբրեւելք։

Սակայն Հայոց Եկեղեցին իւր նախնական Արեւելեան սովորութիւնն պահպանելով Յիսուսի Ծրիստոսի Ծնունդն առանձին չը տօներ, այլ Մկրտութեան և Առաւածայայտնութեան տօնին հետ միասին։

Պ. Տրոյիկի պնդեց իւր կարծեաց վերայ՝ թէ Հայոց վարդապետական մատուռթիւնն ցոլացած է արարողութեան մէջ եւս, ինչպէս յայտ է Սո՞րբ Ասպոաձ երգի ը խաչեցար յաւերժաձէն, որ Հայոց ի բնո՞ւթի՞ն գաւանելու իմաստն կ'արտայայտէ։

Ի վերջոյ Պ. Զելցալ դիտեց, որ Պ. Տրոյիկու գրուածքին մէջ դիտելագլական առարկաներ կան ընդդէմ Հայոց Եկեղեցւոյն, որ յարգանաց արժանի Եկեղեցի է և պահպանած է Հաւատոյ Հանգանակն և նախնական ծէսեր։ Իսկ Տրոյիկու գրածներն՝ ի մասին ազգայնութեան և քաղաքականութեան բաղադրվին անհիմն դուռ, բայց արելով որ քաղաքականութիւնն միայն վերջին ժամանակներս սկսաւ մեծ դեր խաղալ ազգայ կենաց մէջ և մինչեւ անգամ կրօնքն եւս իրեն դարձնել ջինել։ իսկ նախնի դարուց մէջ կրօնականն չափերն անկախ էին և հաւատն իւր ինքնակայ նշանակութիւնն ունէր մարդկանց կենաց համար, առանց քաղաքական շարժ առիթներէ։

Պ. Տրոյիկու պաշտօնական երկրորդ ընդդիմաբանն էր Պ. Նիլսկի, որ յայտնեց թէ ամեն բան հանգամանօրէն և լրիւ գրուած չէ Հայոց Եկեղեցւոյն նկատմամբ. օրինակի համար, ինչուած չէ թէ ինչպէս Նիկեան Ձերնադրեց դաշն կուզէր կապել Հայոց հետ կրկնամկրտութիւն ուսուցման ուղղափառ Եկեղեցւոյն հետ միացնելու համար։ Սխալ է այն տեղեկութիւնն, որ Պ. Տրոյիկի կը պատմէ թէ Թէոդոս Պէլերկին Հայաբնակ Թաղերուն մէջ կը շրջէր և նոցա հետ կը խօսակցէր, վասն զի Թէոդոս, ոչ թէ Հայոց, այլ Հրէից հետ կը խօսակցէր։ Անհիմն է այն տեսութիւնն, զոր Պ. Տրոյիկի յառաջ կը բերէ ի կողմանէ Կիպրիանոս Մեսրոպաթարգմանին, որ Հայոց հերիսիկոսութիւնն ամեն հերիսիկոսութիւններէ վատթարագոյն կը դատէ. յետոյ յայտնեց, որ ԾԲ դարուս Ռուսական մի յիշատակարանի մէջ շատ մանրամասնութիւններ կան Հայոց ծիսից նկատմամբ, զորս եթէ Պ. Տրոյիկի ուշադրութեան առած լինէր, աւելի քան կարող էր քաղել։

Պ. Նիլսկի ընդդէմ Տրոյիկու յայտնեց՝ որ անհիմն է այն դատողութիւնն, իբր թէ Հայք մի մասով խաչակնքելով ի բնո՞ւթի՞ն դաւանել կ'ուզեն ցոյց տալ. վասն զի Ռուսական հերձուածներուն մէջ եւս մի մասով խաչակնքելու սովորութիւն կայ, որ մի բնութիւն դաւանելու դիտմամբ չէ։

Մինչդեռ վիճաբանութիւնն կը շարունակուէր, մի Հայազգի եւս, իբրև անուղղակի ընդդիմաբան, յայտնեց որ Պ. Տրոյիկու գրուածքին մէջ վերաբերուած Հայոց դաւանութեան ռուսական Թարգմանութիւնն ուղիղ չէ։ Բայց Պ. Տրոյիկի պատասխանեց, թէ ըեւս Թարգմանութիւնն համաձայն

չը լինի հայկական այժմեան բնագրին, բայց լաւ ամենայնի համաձայն է ԺԲ դարու մէջ գրուած Հայոց Հաւատոյ դաւանութեան յիշատակարանին, (Ներսէս Շնորհալւոյ Ընդհանրականն կ'ակնարկէ)։ Իսկ Պ. Զելցով յարեց. Հայաստի պարոնին դիտողութիւնն այն ժամանակ կընդունուի, եթէ ապացուցուի որ Հայոց այժմեան կարգացած դաւանութիւնն հաւատարմագրի և ստուգապէս է ԺԲ դարուն մէջ գրուածէն։

Ամենէն վերջն խօսեցաւ Վասիլև եվ աւագ քահանայն, չը համաձայնեցաւ Պ. Տրոյիցկու այն կարծիքին թէ ուղղակի պէտք է առաջարկել Հայոց, որ միանան Ռուսաց Եկեղեցւոյն։ Առաջարկել պէտք չէ, ասաց քահանայն, բայց ձեռք կ'արհամարհել և օգնել պէտք է։ Այս է ճանապարհն։ Ձեռոյ ուղեց խօսիլ Գրիգորովի քննութեան և անձնաւորութեան վերայ, բայց խօսքն ընդհատեցաւ։

Թէ առաջին երկու ընդդիմաբանից խօսքերն և թէ Պ. Տրոյիցկու պատասխանները կը ծափահարուէին։ Պ. Տրոյիցկի շատ համառօտ կը պատասխանէր, բայց շատ մեղմ և ցած ձայնիւ, որ ամենուն լսել չէր լինիր։

Վերջացաւ մրցումն և Պ. Տրոյիցկի արժանի գտաւ եցաւ աստուածաբանութեան վարդապետի աստիճանի»։ ԳՕՒՕՍ.

Հայոց Եկեղեցւոյ միութեան խընդրոյն վերայ առաջ ՁՈՒնայց աստուածաբաններն գլուխ կը պայթեցնէին դարերով։ Այժմ, ինչպէս կ'երեւի, այս ժառանգութիւնն Ռուսաց աստուածաբաններուն անցած է, թէեւ Ցոյնք եւս իրենց նախահարց երաշներու կատարման յուսով, միութեան խնդրոյն վերայ խօսելու պատեհ առիթներն չեն թողուր։ Գիտեն Ռուս մի աստուածաբանութեան վարդապետի աստիճան կը փափաքի ստանալ, Հայոց դաւանութեան քննութեամբ կըսկսի իւր աշխատասիրութիւնն և երկոյ եկեղեցեաց միութեան խնդրով կ'աւարտէ։ Աստուածաբանական խնդրոյ դաշտէն չուտով քաղաքական խնդրոյ դաշտն կ'իջնէ։ Իւր կարծիքներն, թէեւ ընդդիմախօսներ կ'ունենան, բայց կը ծափահարուին ակադեմիական կաճառէն։ Աստուածաբանական քննութիւն և Հայոց Եկեղեցւոյ միութեան խնդիր, ինչ յարաբերութիւն ունին իրարու հետ։ Այժ, աստուածաբանութեան վարդապետի աստիճան ստանալու համար, կարելի է Հայոց Եկեղեցւոյ դաւանութիւնն եւ վարդապետութիւնն նիւթ ընտրել, բայց այս մասին Հայոց բոլոր դրաւոր երկասիրութիւնքն, թէ՛ տպեալ և թէ՛ անտիպ, ծամելու, մարսելու և ապա ապարէզ ելնելու է։ Անհայագէտ Ռուս մի ինչպէս կարող է խղճիւ կատարել այս վիճակ պաշտօնն, քանի որ հատուկոտոր և թերի թարգմանութիւններէ ու յունական մշեւանգութենէ տարաձուած անբոլոր տեղեկութիւններէ զատ՝ ուրիշ ուղեցոյց չ'ունի Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան, վարդապետութեան, սաւանգութեանց և արարողութեանց խորն թափանցելու համար։ Բայց ինչ հարկ կայ այսչափ խոր թափանցելու, քանի որ միայն եկեղեցեայ միութեան խնդիրն յուզելով կարելի է աստուածաբանութեան դոքտորի աստիճան ստանալ Ռուսական Ակադեմիայի մէջ, քանի որ բիւրաւոր անդամ կրկնուած բնոյթեան, խալեցուի, ծննդեան փնի և այլ խնդիրներն քրքրելով կարելի է հանճար փայլեցնել և ծափահարուիլ։ Կերեւի թէ, ոչ որ Հայոց Եկեղեցին Ռուսականին հետ մի

ոչնչանալ դիւրին և մեռաւոր ձանձրալի հոգիներ ցոյց տայ, կարող է առաւել ճաշակաւորութեան վարդապետի վիպասիրներ անտարակոյս Ռուսիոյ քաղաքակէտներն առնել չուտով կարեն առանձնաշնորհքն Ակադեմիայի անդամներն։

Մենք կը կարծենք թէ միայն քաղաքականութեան մէնեղսրտին մէջ կը յուզուի միութիւն այս խնդիրն, բայց դիմադարձաբար մինչև Ակադեմիական առեղնախասութեան գեմն եղած է։ Զարմանալի է, որ Հայոց հովիւներու քնացած ժամանակ Ռուսաց առաջնորդներն կը մոռնան նոցա հօտի փրկութեան համար, զոր մի միայն միութեան մէջ կը տեսանեն, այն միութեան, որոյ պարտուղն տրդէն կը վայելեն Վրացիք, կամաց կամաց կորուսանելով իրենց ազգայնութիւնն ու լեզուն։

Ա՛հ, ինչ տխուր բան է, երբ ազգ ազգ դաւանութիւնների քաղաքական միութեանց դարձիք դարձնել կը ջանան, երբ չեն խղճար կոյսերն կոյսեր տալ եւ Աստուծոյն Աստուծոյ, այլ կը նկրտին երկուսեան եւս կոյսեր տալ. բայց ի՞նչ քան առաւել տխուր է, երբ տխուրին տղդեր կան, որ իրենց կեանքն կը զարձուի և իրենք քնացած են յիմարութեան, անձնամոռութեան և անքաղաքակրթութեան խոր քնով։

Պ. Տրոյիցկու և իւր ընդդիմանիկ ամենայ Հայոց Եկեղեցւոյն նկատմամբ ունեցած սխալ հասկացողութեան դէմ կարելի էր ընդարձակօրէն խօսիլ. բայց աւելորդ կը համարիմք. վասն զի մէջ նադարեան կրօնական վէճեր յարուցանելու միտքը չունիմք։ Հայք հերետիկոս են թէ ուղղադաւան, այդ վճիռն եւս մեր Եկեղեցւոյ թշնամիներն չեմք սպասեր։ Եւ ի՞նչպէս կարելի սպասել, քանի որ մեր Եկեղեցին դարերէ ասդին իւրաքանչիւր մասնաւոր քանակութիւնէն անգամ հերետիկոսութիւն և ուղղափառութիւն կը հանեն և այնչափ հմտութիւն ունին մեր Եկեղեցւոյ վարդապետութեան և աստուածաբանութեանց վերայ, որ տակաւին չը գիտեն թէ մի մատով կը խաչակնքեն Հայք, թէ երեք։

Այս ամեն իմաստակութիւններն ծնունդ են այն բուռն եռանդին, այն անքուն աչքուն թեան, որով Հայոց Եկեղեցին միացնել կը ուենչան, և միայն նելով գայութիւնն Քրիստոսի Եկեղեցւոյ շարքին։

Ափսո՜ս, որ Փրիտոնէութիւնն տակաւին այս վիճակին մէջ է։ Ափսո՜ս, որ տակաւին իրենց մերձաւորի սպանման հետամուտներն կը համարին թէ պաշտօն կը մատուցանեն Աստուծոյ։

ԿՈՒԻՒ

ԻՆԱՐՆ ՉԻԹԵՆԵԱՅ

Ա. Համբարձման Տօնն Հայք եւ Յոյնք միասին կը կատարեն Զիմենեայ սարին վերայ։ Առաջին օրն իւրաքանչիւր ազգ յատուկ վրան և սեղան կը պատրաստէ յաջորդ աւուր պատարագին համար, իսկ Ժամերգութիւնն նոյն գիշերն կը կատարուի։ Ի վաղուց անտի սովորութիւն կայ, որ Հայք Օրհնութեան շարականն փոքրիկ մատրան մէջ կ'երգեն և Աւետարան կը կարդան։ Յոյնք եւս սպատ են իրենց կարգին որ և իցէ բան կարդալու. վասն զի Մատուռն Թէ և Տաճկաց ձեռքն է, բայց Տօնական աւուրց մէջ Քրիստոնէից կը տրուի։

Ա յս տարի, երբ մեր Միաբանները Օհնութեան շաբաթվան ժամանակ կ'ուզեն հանդիսիս Մատուռն մնալ եւ մեր սովորական արարողութիւնն կատարել, Յոյնք կը դիմադրեն և չեն թողուր ներս մտնելու։ Մեր Միաբանները որշափ կը ջանան համոզել, որ յետ կենան Յոյնք սոյն հակառակութենէն, ամենեւին իրենց ձայնն լսելի չը լինիր։ Ի վերջոյ մերայինք տեսնելով, որ կատարել բռնաբարութիւն է Յունաց վարմունքն եւ սոյն խափանութիւն մեր կրօնական արարողութեան, կ'ըստիպուին ներս մղուիլ, կարծելով թէ Յոյնք տեղի կը տան։ Սակայն Յոյնք կը սկսին յարձակիլ մեր յառաջնորդաց Միաբանից վերայ եւ հարուածներ տալ։ Մեր Միաբանները տեսնելով թէ սոյն դիմադրութիւնն առաջուց խորհուած և պատրաստուած է, և ոչ մանր վայտեր անգամ կը կրեն իրենց վերայ, կը սկսին փոխադարձ հարուածներ տալ դիմադրողներուն։ Կռիւն կը տեւէր, Յոյնք բազմութիւ, մեր երկու հարիւր հոգի, իսկ մերայինք հազիւ թէ քան հոգի։ Յունաց բազմութիւնն քաղկացած կը լինի ոչ թէ վանուց Միաբաններէն, այլ քաղաքի Աւետ քահանաներէն և ժողովրդէն, յորոց շատերն, թերեւս դիտմամբ, արբեալք և ոգեւոյ լմնկելօք արիացեալք։ ընդհակառակն մեր քաղաքացի աղքատներէն ամենեւին մարդ չը գտնուիր։

Կռիւն և գանակոծութիւնն բաւական ժամանակ տեւելէն ղէնի՝ կը խաղաղին առ վայր մի, մարդ կը ղկուի և Կառավարի կողմէն հաղորդուեան կը գայ զօրականներով հանդերձ։ Ա յս միջոցին մեր վանքին եւս լսուին հասած լինելով՝ Միաբաններէն շատերն կը վազեան յօդնութիւն եղբարց, որք ի լեառն Ս. Համբարձման։ Մերայինք կ'առաջարկեն հազարապետին, որ մեր սովորական արարողութիւնն անպատճառ պէտք է կատարուի, ինչպէս ամեն տարի կատարուած է։ Հազարապետն կը պատասխանէ թէ ինքն եկած է միայն խաղաղութիւնն պահպանելու համար, իսկ արարողութեանց կատարուելն կարող չէ միջամտել։ Ինչ արարողութիւն ունին Փրկութեանց կարեն կատարել, միայն թէ առանց կռուոյ և չխռովութեան։ Ա յս ժամանակ մեր Միաբանք հանդիսիս մատուռն կը մտնեն և Յոյնք բնաւ չեն դիմադրեր։

Ա յսպէս կը վերջանայ այս տխուր կռուոյ թիւնն և լսնանալով՝ իւրաքանչիւր ազգայ պատասխանները կը սկսին իրենց յատուկ վանքերուն տակ եւ ամենայն խաղաղութեամբ կ'ատարուին։

Զարմանալին այս է, որ դիմադրողներն Յոյնք, իրաւունք բռնաբարողներն Յոյնք, վերջմնանք պատճառողներն Յոյնք, բազմութիւն Յոյնք, և դարձեալ Յոյնք երկիցս հետագրով բողոքած են ի Բ. Դուռն, որպէս թէ Հայոց Միաբանութենէն յանիրաւի ծեծ կերած և վիրաւորուած են։ Ա հա առիղծուած, յորում նենգութիւն եւ ցածութիւն միանգամայն կը տեսնուին։

Գամառկոսէն հետեւեալն ղկուած է Սիոնի միջոցաւ հրատարակելու։

Հայկազեան Ընկերութիւն Գամառկոսի, բաղկացեալ ի հարիւր չափառն բաժանորդաց, սկսեալ ի 1 էն Մարտի 1875 ամի։

Պայմանք եւ կանոնք Ընկերութեան։

1. Ընկերութեան նպատակն է յօժարութեամբ դրամ հաւաքել և ի

ժամանակին ստահակապէս չահեցնել։

2. Ընկերութեանս անդամ դրուած պէտք է նախ մէկ անգամ (մէկ քառորդ ժինի համար) 0սմ. քառորդ ոսկի վճարէ. և չաքաթականն ալ քառատուն և հինգ փարայ անձամբ հաւաքչին վճարէ մինչև երեք տարի. և ամեն մէկ տարի տարեգլխոյն գարձեալ մէկ մէկ քառորդ ոսկի պէտք է վճարել չաքաթականները գարձեալ չարունակելով. իսկ ով որ մինչեւ չորս չաքաթ չը վճարէ պէտք է զոյն հրաժարած սեպուելով անունը Ընկերութենէն ջնջել։

3. Իգական սեռէն ալ կրնան քաժանորդ գրուիլ, բայց քուէ տալու իրաւունք չունին։

4. Եթէ մէկը հիւանդութեան պատճառաւ չը կարենայ իր չաքաթականները վճարել, անոր կը ներուի. մինչեւ այն ատեն, որ կը յուսացուի վճարել անցեալ և ներկայ չաքաթականները. բայց թէ որ բոլորովին անկարող դանուի ապացոյցներով, մինչև այն ատեն դրած քաժինը կ'առնէ առանց չահու՝ անունը ջնջելով. բայց թէ որ ուրիշ տալ ուզէ իւր քաժինը՝ և Ընկերութիւնը վստահ ըլլալով նոյն փոխանորդին վարուց և կարողութեան վրայ հաճի, կրնայ ընդունուիլ։

5. Եթէ ժամանակ անցնելէն վերջ ընկերութեան անդամ գրուիլ ուզող ըլլայ, պէտք է նախ ընդհանուրին հաճութեամբը. և ապա մէկ 0սմ. քառորդ ոսկին վճարելէն վերջ, Ընկերութեան սկսելէն մինչեւ այն ատեն՝ անցեալ չաքաթականները և իր քաժինին չահն ալ վճարէ, և ապա ընկերոջ կարգը անցնի։

6. Ընկերութեան մէջ եթէ անուղղայ և խառնակար մէկը գտնուի, Ընկերութիւնը իրաւունք ունի զանի առաջին և երկրորդ անգամ իրատել. եթէ չ'ուղղուի, Ընկերութենէն պիտի մերժուի. առաջին տարին՝ հարիւրին 30. երկրորդին հարիւրին 60. և երրորդին՝ բոլորովին ամբողջ տուածը Ընկերութեան թողուով։

7. Ընկերութեան մէջէն եթէ մէկը վախճանի, անոր քաժինը որդւոյն կամ ժառանգին կ'ինայ, որն որ կրնայ իբրեւ ընկեր չարունակել. բայց եթէ ժառանգը անկարող կամ փոքր ըլլայ՝ մինչեւ երեք տարի Ընկերութիւնը սոնոր տեղ քաժինը կը վճարէ, և անկէ վերջը կամ ամբողջ դրամը չահով մէկ տեղ իրեն կը տրուի, և կամ լոկ չահ. բայց դարձեալ կրնայ անձին և ժամանակին համեմատ խոհեմութեամբ անօրինուիլ. և եթէ ժառանգ չունենայ՝ Ընկերութեան կը մնայ։

8. Ընկերութիւնը պէտք է ժողով մը ունենայ իր մէջէն քուէով ընտրուած քանիքուն եօթը անձերէ բաղկացեալ, այն անձերէն պէտք է ընտրուի ընդհանուրին քուէով, Տեսուչ, Գանձապետ, Գրագիր եւ Հաւաքիչ, ու Տնօրէն ժողով, որոնք մէկտեղ Ընկերութեան գործերը բարեկարգելով անօրինեն. իսկ եթէ սոնցմէ մէկը իւր պաշտօնին մէջ թերութիւն ունենայ առաջին և երկրորդ անգամ նեըելի է. բայց երրորդին պէտք է ուրիշը ընտրել Տեսչին ազդեցութեամբ և ընդհանուրին քուէով։

9. Տեսչի պարտքն է Ընկերութեան բոլոր գործերուն հսկել և պէտք եղած աեն ժողով գումարել։

10. Գանձապետի պարտքն է հաւաքուած սոակին հսկել Տեսչին եւ Գրագիրին հետ մէկտեղ։

11. Գրագիրն պաշտօնն է Ընկերութեանն եղից եւ մոխց վերայ հսկել Տեսչին և Գանձապետին հետ, և տօմարը արձանագրել. և ամեն երեք ամիսը անգամ մը հաշիւ ներկայացնել ընկե-

րութեան, կանխիկ ազդարարութիւն տալով, և ամիսը անգամըն ալ Տնօրէն ժողովին։

12. Հաւաքչին պաշտօնն է ամեն շաբաթ իրեն յանձնուած կնքեալ տոմսերը Ընկերութեան բաժնել՝ շաբաթականները ընդունելով, եւ եղած գումարը գանձապետին յանձնել։

13. Ընկ. Ընդհանուր ժողով մը ալ ունի, որ կը բաղկանայ բոլոր անդամ ներէն, որոյ պաշտօնն է որոշեալ ժամանակին հաշիւ պահանջել գործակալ ներէն. և եթէ Տնօրէն ժողովէն եւ գործակալներէն մէկը կասկածելի ըլլայ, պայն քննելէն և ստուգելէն վերջ, պէտք է իւր պաշտօնէն մերժել և ըստ արժանի տուժել. և անոր տեղ ուրիշը ընտրել ընդհանուր քուէով։

14. Պայմանեալ ժամանակին յառաջ մանաւանդ մէկը կարող չէ հաշիւ պահանջել, միայն թէ ոչ որ դիտողութիւն մը ունի Տնօրէն ժողովին կը յայտնէ և Տնօրէն ժողովն Ընդհանուր ժողով գումարելու հոգ կը տանի. բայց թէ որ Ընկերութեան մեծագոյն մասը համաձայնի կրնայ ժամանակէն յառաջ Տնօրէն ժողովին ձեռօք հաշիւը դիտողութեան առնուլ և պէտք եղածը տնօրինել։

15. Տնօրէն ժողովը պարտաւոր է հաւաքուած դրամը (որչափ որ ըլլայ) շահեցնել. երբ շահու տրուի՝ պէտք է հաստատ և լծակից ստորագրութեամբ և կամ գրաւով տրուի. եթէ դրժբախտաբար շահու տրուելիք դրամը կորսուի, պատասխանատուն ժողովը պիտի ըլլայ. եթէ Ընկերութեան բաժանորդ գրուողներէն մէկը շահով դրամ ուզելու ըլլայ, պէտք է ընկերութենէն դուրս հաստատ և լծակից երաշխաւորութեամբ կամ գրաւով տրուի, առանց այս երկու կէտին արձանագրութիւն չըլլայ երբէք մէկին ոեւէ տալու բայց Տնօրէն ժողովն ոեւէ տալու միջոցէն զատ, ուրիշ որ և իցէ յարմար միջոցաւ ալ կրնայ դրամը շահեցնել, Տնօրէն, Գանձապետին եւ Գրագրին հետ խորհելով։

16. Ընկերութիւնը պէտք է երկաթեայ արկղ մը ունենայ, ապահով տեղ դրուած, երեք տարբեր բանալիներով, հաւաքուած դրամը և մուրհակները անոր մէջ ամիսվելով, որուն բանալիները, մէկը Տեսչին, մէկը Գանձապետին և մէկն ալ Գրագրին քով պիտի մնայ։

17. Ընկերութիւնը պէտք է երեք կտորէ բաղկացեալ կնիք մը ունենայ, ամեն մէկ կտորը՝ արկղին բանալիները ունեցողներուն քով պէտք է ըլլայ, ո րով բաժանորդներուն բաժնի տոմսերը կը կնքուին։

18. Այն կանոնները ընդունողը՝ կը նայ ընկերը ըլլալ, և բոլոր ընկերք պէտք է որ ստորագրեն և Տեսչին քով պահուի։

19. Թէ որ ժամանակ անցնելով կանոններուն մէջ փոփոխութիւն ընել հարկ ըլլայ, երեք ամսեայ ժողովին մէջ պէտք է որոշուի եւ յաւելուածով մը ասոր տակը գրուի, զոր դարձեալ բոլոր անդամները ստորագրելու են։

20. Սահմանեալ ժամանակին այսինքն երեք տարի լրանալուն պէս, պէտք է եղած գումարը տոկոսով հանդերձ բաժանորդներուն բաժնել, և ամեն մէկ բաժանորդ իրեն բաժինը հանդերձ եղած շահով առնելէն վերջ, իրեն կապ մը պիտի մնայ, եթէ կ'ուզէ դարձեալ Ընկերութեան անդամ մնալ և եթէ կ'ուզէ բաժանուիլ։

ՓՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ Ի ՀՆԴԻԿՍ

Յետ քան և ամի համբարձման Տեառն յերկինս՝ Թովմաս վերջին ի հաւատացեալց յառաքելեան նորա՝ եղեւ առաջին աւետարանիչ արքայութեանն ի հեռաւոր ծագս աշխարհին Հնդկաց։ Սկսեալ ի Պարթից և ի Բակտրանէ քարոզեաց մինչեւ ի Դաքան, և անդ ի լեառն Մանի՝ եօթն մղոնաւ հիւսի ի Մադրատայ հաստատեալ զաթոռն առաքելական՝ ձեռնադրեալ ըստ բաղումն յաշակերտաց իւրոց և սրբուեալ զնոսա քարոզ աւետարանին ընդ ամենայն Հնդիաստան։

Թէպէտ և չէք առձեռն յիշատակութիւն սրբազան վաստակոց նորա՝ սակայն և չէք և տարօրինակ տարածեալ նորա զհաւատս երկնաւոր վարդապետին ընդ ամենայն տեղիս ուրանաւ իւրում։ Զի ի ժողովն Նիկիոյ որ գումարեցաւ յերրորդ դարուն՝ էր և եպիսկոպոսն Հնդկաց։ Եւ յամին հանգերձեալ՝ Փրումենտիոս ձեռնադրեցաւ յԱթանասէ Հայրապետ Հնդկաց։ Ի մէջն վերջորդ դարուն եկին դարձեալ այլոմն Թովմաս կրօնաւոր, ծլսաեալ ի կերպարանս վաճառականի, (զոր ոմանք համարին գոլ Հայ ազգաւ), և զաղաւմն ի նոցանէ դարձոյց ի հաւատն Քրիստոսի։ Իսկ յաւուրս Յուստինիանոսի կայսեր, յորժամ հալածանք յարեան ընդդէմ Աբեւելեան եկեղեցւոյ վասն ոչ ընդունելոյ նորա զժողովն Քաղկեդոնի, նախ զնեռսէս Հայկազունի առաքեաց սպարապետ, եւ ապա զԲեղիսարիոս՝ առ ի քանուիլ ածել զնա յայն դաւանութիւն։ Վասն որոյ ժողովեալ Թեոդորոսի Ասորւոց Հայրապետի զաղանութիւնն յղդէ իւրմէ, և զեօթնեսին յաշակերտացն ձեռնադրեալ յերկուսին միահամուռ զուարթին ի ծովեզերս Աքարիոյ, և նաւարկեալ անտի՝ եկին հասին ի Քօչին՝ առ ծովեզերօքն Մալաբարայ։ Ուր զնեալ եկեղեցիս բազմացան յոյժ, եւ կան մինչեւ յայսօր ժամանակի։ — Հայր Սոեփաննոս աշխարհագիր գրէ զաստանէ, թէ «ի ժամանակս Թագաւորութեան Ցուննայ անհնարինս նեղեալ ի չարչարանաց և ի տառապանաց՝ ոմովք նեղէին զնոսա Ցոյնք՝ սակս Քաղկեդոնի ժողովոյն, հատուած մի ի նոցանէ գնացին վախճանական յաշխարհն Հէն իւրեանց, և ձանապարհորդելով ընդ ցամաք ի զանազան աշխարհս, մինչ հասին ի Քօչին»։ Հատ. Դ. 104։ Եւ եթէ ճշմարիտ լցէ գիւտ արձանին և գրութեան, զոր յիշատակէ անդ 261 և 262, թէ Օլմիէն ի Թաչինայ՝ այսինքն յԱսորւոց՝ էած ի Չին զօրէնս Քրիստոնէից յամի Փրկչին 636, ասելոմն խոստովանելի է, թէ Ասորիք ի հալածանս անդ իւրեանց՝ առաւել լուսաւորեցոյն զհաւատս երկնաւոր վարդապետին՝ քան եթէ մեծացեալ էին խաղաղութեամբ անպարծ յաշխարհի իւրեանց։ Ապա եկին ի Բաբելոնէ Յովհաննէս և Դանիէլ նեստորականք, և յետ նոցա այլք՝ մինչեւ ց1652, ուր Գրիգոր եպիսկոպոս Երուսաղէմի շրջելով քարոզութեամբ ընդ աշխարհն եմոսկիոյ մինչ ի Մոսկա, եկն անդաստ ի Քօչին, և հաստատեաց զաւանութեանն ի դաւանութիւն Հայոց եւ Ասորւոց։ Սա գրեաց առ Մարզպանն Հայոց Մերուժէն, որ նստեր ի Տիգրանակերտ, և նա առաքեաց ի հընդկս զեպիսկոպոս մի Ասորի-երկուս քորեպիսկոպոսաք, որոյ եկեալ ի Քօչին հովուեցին զեկեղեցին զամս հընդ գետասան։ Ապա եկին Լատին քարոզիչք և զաղաւմն մնորեցուցին յանդ պատարագութեան իւրեանց։ Յամի տեառն 1744 Հանդիպեցաւ նոյա առաքնորդ Նոր-Զուլայ Տ. Գէորգ

եպիսկոպոս : այլ անահղեակ լեզուի նոցա՝ ոչ ինչ կարող առնել. վասն ո՛ր գնաց և յամին 1748 առաքեաց առ նոսա զԱհարոն վարդապետ զայրն բանիբուն : Եին ընդ այն աւուրս եպիսկոպոս մի Ասորի , այլ քանզի այր սրբեցեալ էր՝ ոչ ընկալաւ զնա ազգն : Վերստին գրեցին ի Տիգրանակերտ առ ազգն իւրեանց , և նոքա առաքեցին առ նոսա եպիսկոպոս մի Շուբրօլ ըստ անուն երկու բարեպիսկոպոսաք : Յամին 1750 եղեւ հերձուած ի միջի նոցա , ոմանք յարեցան ի կողմն սրբեպիսկոպոսի իւրեանց՝ և ոմանք ի կողմն Ահարոն վարդապետի , որք այնպես հովուեցին զնոսա՝ մինչեւ մեռաւ Ահարոն : Իսկ յետագայ առաջնորդացն նոր Ջուղայ անհնազանեալ փոխանորդել նմին զայլ հովիւ ի վերայ հօտին՝ հալեցան ամենեքին և զանազեցան յիւրեանց տեղեացն անօրէնս :

Այլ առաւել քան զնոսա մեծ աթարին վաճառականք ազգի մերոյ ընդ հաւատն Քրիստոսի ի հնդկաստան , որք բազմօք յառաջ քան զգալուստս եւրոպացւոց՝ վինեցին եկեղեցիս դրեամ թէ յամենայն վաճառաշահ քաղաքս հնդկաց , և բարձր արարին զպաշտօն փառաց Աստուծոյ ամենակալին ի միջ ամենայն հեթանոսաց :

Յետ նոցա զեղան փորթուգալք և կրօնաւորք նոցա՝ որպէս Սպանիացւոցն ի Մեքսիկոն , ի ձախ բարձին ըզխաչ՝ և յաջ զսուսեր՝ բռնի ածել զնոսա ի հաւատս իւրեանց : Զօրացան յետ նոցա Գանիք , Գաղղիացիք եւ Անգղիացիք , և զաղանաւն Թէ ի հաւատացելոյ և Թէ յանհաւատից՝ որ ազգաւ եւ որպէս ի կողմն իւրեանց՝ առանց խորհրդոց :

Հաւուրս ինչ ազգիս իւրեւ եւեւ ասեն ասանց ի վաղեմի ժամանակաց հետէ բնակեալ ի Բաբել՝ զամենայն հոգեւորական պիտոյս իւր ընդունէր յառաջնորդէ Նոր Ջուղայ՝ մինչև յըլ Կարապետ եպիսկոպոս : Այս օտարոտի և ազէտ եպիսկոպոսաց փախանորդեալ յամաւ տէրն , է որ անդիտութեամբ և է որ անհոգութեամբ զանց արարին առաքել առ նոսա մանաւանդ Աստուածային ընծայից : Եւ անխնամ ժողովրդեանն զամս յոլովս անհնազանդ պահելով զմանկունսն և անհաղորդ Թողեալ զմեռեալս իւրեանց՝ մանաւանդ ամբողջ պահեցին զհաստատ հարց իւրեանց յամ տեառն 1833 : Յորում յարուցեալ զօրաց Անգլիացւոց ի Քաբուլ յամբառնալ զՇահ—Սուլա յաթոռ իւր՝ պատահեալ քահանայի բանակին և հրաւիրեալ յեկեղեցին՝ մատուցեալ էին զառաջեւորա նորա ջահահաս մանկունս աւելի քան քսան Թուով , մկրտել զնոսա : Գուցէ և զարձան իսկ ի կրօնս նոցա : Զամն՞ւ լսի՞ն արդեօք այսպիսի հովիւք , որք զանձինս և եմ սրածեն , անփոյթ եղեալ զհօտին : (Պատմ. հին Հնդկաստանի Մեսրոպ Դ . Թաղիադ . Գլ . 5 եր . 220—225 տպեալ ի Կալկաթա) :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ռուսաց Հիւպատոսն , Պ . Խոշկին վիճ փոխառեցաւ եւ իւր տեղն եկաւ նախորդ Հիւպատոսն , Պ . Կաժեվնիկով , որ Յունաց Կիրիլոս Պատրիարքի ջերմ պաշտպանն էր և նոյն Պատրիարքի գահընկեցութենէն զկնի՝ Ռուսիոյ Տէրութենէն Պետերբուրգ կոչեցեալ , և երբ Պրոկոպիոս անկաւ և անիշխանութիւնն զբաւցաւ Յունաց Միաբանութեան մէջ , վերստին նոյն Հիւպատոսն եկաւ , պատուով պահակեալ

իբր Տէրտէրենէն և աւելի լաւագոյ իշ խանութեամբ ։

Ա յժմ երուսաղէմի Ռուսաց վանուց հոգեւոր իշխանութիւնն ու վարչութիւնն ևս ենթարկուած է հիւպատոսի իշխանութեան ։

—Ինթերվիւհեմի Ս. Ծննդեան տաճարի մեր սեպհական տեղերն աւելլելու ժամանակ Յոյնք դարձեալ արգելքներ յարուցին և քանի մի տեղեր անաւել մնացին ։

Ա յս արգելքն յատուկ դիտմամբ էր, որպէս զի Սիւնաղարդ Գաւթի մուշտաերեկութեան խնդիրն, որ քննութեան տակ է, մոռացութեան տրուի։ Թէ պէտ Տէրտէրեան կողմն աւելլելու հրաման կար, բայց մեք նոր խոտորեցնել խաւսափելով առանց դիմադրութեան գադրեցուցինք մեր աւելն, և ամէն պարագաներ տեղւոյն Բդեշխին հաղորդելով Տնօրէնութեան կը սպասենք ։

—Զմերան հորդահոսան անձրեւներու պատճառաւ Պալէստինի հունձքն մեծ տուած է այս տարի։ Արդէն արտօրայքն կը հնձուին և կը յուսայուի, որ սղութիւն պիտի չը լինի այս տարի, եթէ երկրի բերքն մնացամբ իր մէջն մնայ և ոչ թէ չոքենաներով ուրիշ երկիրներ փոխադրուի ։

—Տեղւոյս մեր քաղաքացի ազգայիններէն Պ. Սրապիոն Մուրատեան, հնարհալի և լեզուագէտ երիտասարդն, որ Պրուսայ Հիւպատոսարանի Թարգման էր, ուղղեւորեցաւ ի Բերլին, ուր պիտի պատրաստուի Արեւելեան լեզուաց և կամ իրաւագիտութեան քննութիւն տալ և վկայագիր ստանալ որով և մեծ ասպարէզ կը բացուի իր առջեւ Հիւպատոսական պաշտօնէութեան մէջ ։

Պ. Սրապիոն Մուրատեան արդէն անձամբ ծանօթ է Պրուսիոյ Թագաւորաւանգ Իշխանին և այլ Գերմանացի մեծամեծաց, որոնք մերթ ընդ մերթ այցելութեան եկած են ի Պաղեստին. ուստի քաջայոյս եմք, որ մեք իր մեծանուն ծանօթիմ չնորհիւ եւ մեք իր քնաձիր ընդունելութեամբ պիտի հանի իր գեղեցիկ նպատակին ի պատիւ իր անձին և ի փառս Հայ երիտասարդութեան ։

Պ. Սրապիոն երկու կրտսեր եղբայրներ եւս ունի, որոնք կը պատրաստուին Յոզպէի Գերմանական դպրոցի մէջ, Ժամանակին Գերմանիա երթալու և ուսման զանազան ճիւղերու մէջ կատարելագործուելու համար ։

—Բաւական ժամանակ է, որ Յունաց նորընտիր Պատրիարքի դիմադրողներն գնացած են եւ օր աւուր գալատեանն կը սպասուի ։ Քաղաքացի ժողովուրդք հպատակելու որամադրութիւն չունին ։ Կը լսուի թէ նոր Պատրիարքն լուր ղրկած է, որ մինչեւ Միքայէլմաս թիւն և ժողովրդք երթալու հետ չը համաձայնին, ինքն իջնիլն պիտի չ'ելնէ ։ Բայց տարակուսական է այս լուրն, աւելի հաւանականն այն է, որ մօտ օրերս պիտի յերուսաղէմ ժամանէ նորընտիր Պատրիարքն ։ Տեսնենք թէ յետ գալատեան խաւսափութիւնն դարձեալ պիտի շարունակուի Միքայէլմասի և ժողովրդեան մէջ, թէ խաղաղութիւնն պիտի վերահաստատի ։

Առհասարակ գովեստիւ կը խօսուի նորընտիր Պատրիարքին վերայ, մէջ ի մասին ուսումնականութեան, այլ ի մասին ազնիւ բարուց և հոգեւորական պարկեշտութեան ։

	Դր.	Փղ.
Հեդդրէն խոշորագիր. Տպեալ 1869.		30
Հենրիկոս եւ Մարիամ. Տպեալ 1870.	2	20
Հռոմանդ սիրոյ, դորթ Մարեզեան Յովսէփ վարժապետի. Տպ. 1870.	2	
Պ. Երուբինա Եղիազարի, եւ Եսայի Կոստիկոսի Աղուանից. Տպեալ 1868.	3	
Ձաշոց դիրք. Տպեալ 1873.	300	
Ձառ հաղորդութեան. Տպեալ 1860.	4	
Ձառ դպրոցական. երկու փոքր տետրակներ. Տպեալ 1863 եւ միասը՝ 1867.		30
Ձորթաւանութիւն առ Ճեռն. աշխատասիրեաց Եղիազար Մուրատեան.	3	
Մատենադրութիւն Նախնեաց. Տպեալ 1856.	6	
Մատթէոս Ուռհայեցի, դորթ Նախնեաց ԺԲ դարու. Տպեալ 1869.	14	
Մեկնութիւն Եփեսացոց. Տպեալ 1850.	25	
Մեկնութիւն յայտնութեան. Ներսէսի Լամբրոնացւոյ. Տպեալ 1853.	10	
Մխայէլի Ասորւոյ ժամանակագրութիւն, դորթ ԺԲ դար. Տպեալ 1871.	16	
—Նոյնը՝ ուրիշ դիմադրով բաղդատուած վրան ընդ տարբերութեամբ.	12	
Յովհաննէս կաթողիկոս, պատմութիւն Հայոց, դորթ Նախնեաց Թ. դարու.	10	
Յովսէփ գնդեցիի. Տպեալ 1849.	10	
Նարեկ. աղօթամատոյց Ս. Հօրն մերոյ գրիգորի Նարեկացւոյ. Տպ. 1868.	12	
Նոր բնիկերգարան, Տպեալ 1868.	5	
Ոխերգութիւն ի մեծն Ներսէս. Տպեալ 1863.	4	
Ոսկան հայրենասիրի. Բ. Տիլ 1874.	4	
Ոստանն լարուց. Տպեալ 1857.	18	
Ոստանն տրամաբանութեան, Տպեալ 1869.	3	
Պատմութիւն Ս. Գրոց. Տպեալ 1867.	8	
Պատմութիւն նոր Կտակարանի, Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Ս. Երուսաղէմի, քաղուածոյ Լ արդամանութեամբ. Տպ. 1872.	5	
Պատմութիւն Երուսաղէմի. աշխատասիրեաց Լեւոն վարդապետ. (**)	8	
Պատմութիւն Ս. Լուսաւորչի. Տպեալ 1867.	4	
Պատմութիւն Լենկթիմուրայ. Տպեալ 1873.	10	
Պատմութիւն Հայոց. Տպեալ 1870.	6	
Պատմութիւն բարոյական. Տպեալ 1872.	7	
Պատմութիւն Հայաստանեայց. ատաքելական Ս. Եկեղեցւոյ. Տպեալ 1872.	16	
Պատմութիւն երկամայ պանդխտութեան ի Հազէչատան, Տպեալ 1871.	20	
—Նոյնը՝ Գաղղիարէն լեզուաւ.	20	
Պաղմոս խոշորագիր, այլ եւ այլ անգամ տպուած.	10	
—Նոյնը՝ մեծ դիրքով	6	
—Նոյնը միջակ՝ դպրոցներու համար. Տպեալ 1873.	6	
Նոյնը՝ փոքր դիրքով եւ մանր գրով.	3	
Պեճն օրագիր, կազմեալ 1866ին մինչեւ 1873. աշխարհիկ լեզուաւ.	40	
Պատարագութիւն Երուսաղէմի. Տպեալ 1859. (**)	4	
Պարապութիւն վոխատաց մանկանց. Տպեալ 1868.	6	
Տանվիլ աշխարհագրութիւն Երուսաղէմի. Տպեալ 1855. (*)	3	
Տարերք իմաստասիրութեան, Տպեալ 1852. (*)	6	
Տիեզերութիւն հովուական. Տպեալ 1856. (*)	8	
Տրամաբանութիւն, Պատուելի Գրիգորի Փէշտիմալճեան. Տպեալ 1853. (*)	18	
Տօնացոյց. Տպեալ 1868.	10	
Փարական, հին սեռ. Տպեալ 1872.		20
Փարական Գաղղիերէն լեզուի. Տպեալ 1871.	2	20
Փարականութիւն Հայերէն լեզուի. Տպեալ 1870.	4	
Փարականութիւն Գաղղիերէն լեզուի. Տպեալ 1869.	3	
Քրիստոնէական համառօտ, Հայերէն եւ Ասորերէն լեզուաւ, Տպ. 1870.	2	
Օրացոյց եւ դասաւորութիւնք օգոց.	1	

ՅԱՆԿ

ՄԱՅԻՍ

Կրթութիւն ժողովրդեան ի Զուիցերիա. (Շար.). 97–101
Աւետնախօսութիւն Տ. Ներսիսի Ամենապատիւ
Պատրիարքի Կ. Պոլսոյ 102–105
Միրզա առ Մասիս. . . . . –106
Մասիս առ Միրզա. 107–109
Գիտութիւն աստուածաբանութեան վարդապետի
ան (Գոքարտի) ստահճան ստանալու համար 110–114
Կռիւ ի լեառն Ձիլճենեաց 114–115
Նոր ընկերութիւն ի Դամասկոս 115–117
Փրիտանէութիւն ի Հնդիկս. 118–119
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ 119–120

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Ա. Սիոնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մի կամ ուրեմն մեծագոյն հատորով։

Բ. Տարեկան գինն է երկու սրծագի մէջիկներ, հանգերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի։

Գ. Ջատ տեղական առնել ուղողը, պիտի է ամէն մէկ տեղին չորս դահեկան վճարէ։